

ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

Տուն եւ հայրենի տուն:

Գիտես, պզտիկ դպրոցական, թէ ինչ է այս երկուքին տարբերութիւնը:

Հայրենի տունը կը շինուի միայն հայրենիքին մէջ, հայրենի հողին վրայ: Իսկ տունը տուն է ընդհանրապէս, որ կրնայ շինուիլ ամէն տեղ, նաեւ՝ օտար հողի վրայ:

Քարտաշ Խաչատուրը Թեհրան կ'ապրէր: Շատ տուներ շինած է: Անոր տաշած քարերը զարդարած են շատ շէնքեր ու կամուրջներ: Զաւակները կ'ուրախանային, որ տուն ունին: Իսկ վարպետ քարտաշը տխուր կ'ըսէր.

— Զաւակներս, ճիշդ է, մենք շինած ենք այս տունը, մենք կ'ապրինք անոր մէջ, սակայն միայն տունին ներսն է մերը: Դուք պզտիկ էք տակաւին եւ չէք հասկնար իմ ըսածներս: Կը հասկնաք այն ատեն միայն, երբ որ մեծնաք:

Երբ զաւակները մեծցան, հասկցան իրենց հօրը ըսածները. օտար հողի վրայ քու տունդ չի կրնար *հայրենի տուն* ըլլալ: Շատ հայեր տուներ ունին օտար հողերու վրայ: Անոնք կրնան գեղեցիկ ու շքեղ ալ ըլլալ, բայց հայրենի տուն չեն:

Հայրենի հողին վրայ շինուած տունը միայն *հայրենի տուն* է:

Չարցումներ եւ հրահանգներ

1. Վարպետ քարտաշը ինչո՞ւ չէր ուրախանար իր շինած տունով:
2. Զաւակները ինչ հասկցան, երբ մեծցան:
3. Ո՞րն է ձեր հայրենիքը, եւ ո՞րն է ձեր ծննդավայրը: Կրնա՞ք ըսել թէ ինչ տարբերութիւն կայ հայրենիքի եւ ծննդավայրի միջեւ:

հայր
հայրենի
հայրենիք
հայրական



Ուշի ուշով կարդանք եւ փորձենք որոշել հետեւեալ երկու շարք բառերուն իմաստները.

ա. **հագուստեղէն** — տաքատ, վերարկու, գլխարկ, շապիկ, բաժկոն...

բ. **ծառ** — սալորենի, տանձենի, խնձորենի, ծիրանենի, թթենի, ընկուզենի...



ՍՈՐՎԻՆՔ.

Բառերը ունին **ընդհանուր իմաստ** եւ **մասնաւոր իմաստներ**.

Օրինակ՝ **հագուստեղէն** բառը հագուստի առանձին տեսակներուն համար **ընդհանուր իմաստ** ունի, իսկ հագուստի առանձին տեսակները **հագուստեղէն** բառին համար ունին **մասնաւոր իմաստներ**: Կամ՝ **ծառ** բառը ունի **ընդհանուր իմաստ**, իսկ **ծառի**



արձան արձանագործ յուշարձան

¹ **Սբ. Էջմիածին** — Մայր Եկեղեցի՝ Հայաստանի Էջմիածին քաղաքին մէջ, Ամենայն հայոց կաթողիկոսին նստավայրը

² **թանգարան** — պատմական՝ գեղարուեստական եւ ուրիշ թանկագին առարկաներ պահելու եւ ցուցադրելու շինութիւն

³ **աւերակ** — փլատակ՝ կործանած շինութեան մնացորդ

⁴ **գլխահակ** — գլխիկոր գլուխը ծռած՝ խոնարհած

⁵ **յուշարձան** — արձան՝ շինութիւն ի յիշատակ ունեւանձի կամ դէպքի

ՀԱՆԵԼՈՒԿ

*Ես երեք տառով վարդագոյն քար եմ,
Տուն շինողներուն շար օգտակար եմ.
Աչքի լոյսն եմ շինարարին,
Ջարդն եմ Հայոց Լեռնաշխարհին:*

Վրժ. Նալպանտեան

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Անդրանիկը հայրիկին հետ գացեր էր Սբ. Էջմիածին¹ թանգարանը²: Իր ուշադրութիւնը գրաւեց պատէն կախուած գորգ մը, որուն վրայ պատկերուած էր աւերակներուն³ մէջ նստած գլխահակ⁴ կին մը: Տղան երկար դիտեց նկարը, ապա դառնալով հորը՝ հարցուց.

— Այս կինը ո՞վ է, հայրիկ:

— Մայր Հայաստանն է, տղան: Անի քաղաքին աւերակներուն վրայ նստած՝ կու լայ:

— Իսկ ինչո՞ւ կու լայ:

— Անի քաղաքին համար կու լայ, զաւակս: Անին մեր հին, շատ հին մայրաքաղաքն էր: Շատ դարեր առաջ թշնամիները աւերեցին մեր այդ շքեղ քաղաքը, որ հռչակուած էր իր գեղեցիկ շինութիւններով: Ատկէ ետք Մայր Հայաստանը, արձակած մազերով նստած այդ աւերակներուն վրայ, կու լայ...

Անդրանիկը շատ տխրեցաւ՝ լսելով իր հայրենիքի անցեալին այդ տխուր պատմութիւնը:

Հայրը մտածեց ուրախացնել իր զաւակը՝ ցոյց տալով անոր Մայր Հայաստան յուշարձանը⁵:

Երբ Երեւան հասան, հայրը ինքնաշարժը վարեց շիտակ *Յաղթանակ* հանրային պարտէզը: Հոն կանգ առնելով արձանին առջեւ՝ ըսաւ.

— Տես, Անդրանիկ, նոյն Մայր Հայաստանն է, բայց այլեւս չի լար: Ան հիմա երիտասարդ է եւ առոյգ: Կանգնած է բարձունքին վրայ եւ, մազերը կոկիկ սանտրած, գլուխը վեր բռնած, հպարտօրէն կը նայի մեր նոր մայրաքաղաքին՝ մեր վարդագոյն Երեւանին: Ամուր բռնած է սրբազան թուրը եւ զայն կու տայ ինձի, քեզի, բոլորիս, որպէսզի վտանգի պահուն պատրաստ ըլլանք հերոսաբար պաշտպանելու մեր սիրելի ու թանկագին Հայրենիքը:

Չարցումներ և հրահանգներ

1. Սբ. Էջմիածնի թանգարանին մէջ յատկապէս ինչը գրուեց Անդրանիկի ուշադրութիւնը:
2. Ո՞վ էր այդ կինը և ինչն էր կու լար:
3. Ի՞նչ կ'ըսէ քեզի «Մայր Հայաստան» արձանը:



Ուշադրութիւն ըրէք հետեւեալ բառերուն ուղղագրութեան.
յետոյ, երեկոյ, Սուրիոյ, Իտալիոյ, Անգլիոյ, Ռուսիոյ...




ՍՈՐԿԻՆՔ.

Հայերէնի մէջ բառերը կը վերջանան *ոյ*-ով և ոչ թէ *ո*-ով:
Բացառութիւն է *այո* բառը:

Ընդօրինակեցէք *միջատ, բանջարեղէն, խաղալիք, քաղաք, կենդանի, կահկարասի ընդհանուր իմաստ* ունեցող բառերը և իրաբանչիրին դիմացը գրեցէք անոնց *մասնատր իմաստներն* ունեցող բառերը:

Օրինակ՝ *միջատ* — ճանճ, մեղու, մրջին, թիթեռնիկ, մարախ, սարդ, կայծոռիկ:



ՀԱՅՐԵՆԻՔԻՍ



Կը սիրեմ քու ձորակներդ
 Ծաղկազարդ ու գեղեցիկ,
 Քու ընդարձակ այգիներդ,
 Բարտիներդ քու սլացիկ¹,
 Ջրանցքներուդ արծաթ գօտին,
 Առուններդ քու կարկաչուն,
 Ոսկի դաշտը Արարատեան՝
 Բերք ու բարիքով միշտ լեցուն:
 Կը սիրեմ քու ջուրդ անուշ,
 Ո՛վ Սեանայ կապոյտ ծովակ,
 Կանաչազարդ ափերուդ մէջ
 Կը ժպտիս մեզի շարունակ:
 Եւ հոսելով լեռներէն վար՝
 Կը վերածուիս ուժի, լոյսի,
 Կը զարդարես հեքիաթային
 Գիշերները Երեւանի:

Հարցումներ եւ հրահանգներ

1. Բանաստեղծը իր հայրենիքին ինչէրը կը սիրէ:
2. Բացատրեցէք վերջին չորս տողերուն միտքը:

Կարկաչ Կարկաչել Կարկաչուն

¹ սլացիկ — դէպի երկինք
 սլացող՝ բարձրացող



1. Ընդօրինակեցէք մասնաւոր իմաստներ ունեցող հետեւեալ բառերը եւ իւրաքանչիւր խումբին դիմացը գրեցէք այդ բառերուն ընդհանուր իմաստը ունեցող բառը.

- ա. վարդ, մեխակ, շուշան, մանուշակ, յասմիկ...
- բ. սղոց, գամ, հարթիչ, ագցան, բահ, կացին...
- գ. հաց, պանիր, երշիկ, կարկանդակ, ձիթապտուղ...
- դ. հոլ, պուպրիկ, գնդակ, հեծիկ, արջուկ...
- ե. խնձոր, նարինջ, բանան, տանձ, ծիրան, սալոր...
- զ. ծիծեռնակ, արծիւ, կռունկ, փայտփորիկ, սիրամարգ...

Օրինակ՝ վարդ, մեխակ, մանուշակ, շուշան, յասմիկ, ծնծաղիկ — **ծաղիկ:**

2. Ուշադրութիւն ըրէք հետեւեալ բառերուն գրութեան.

- ա. **ափսէ, բազէ, Շաքէ, Վահէ...**
- բ. **կը գրէ, կը մաքրէ, կը բուժէ, կը սիրէ...**
- գ. **գրէ, մաքրէ, բուժէ, սիրէ...**

Յիշե՛նք.

Հայերէնի մէջ **ե-ով** բառ չի վերջանար:

ԻՆՉ ԿԸ ՊԱԿՍԵՐ ՍԿԻՌԻԿԻՆ

Որսորդը անտառէն սկիւռ մը բռնեց եւ գեղեցիկ վանդակի մը մէջ դրաւ զայն: Ամբողջ տարին սկիւռը մնաց որսորդին քով: Խեղճ կենդանին հայրենի անտառը վերադառնալու ամէն յոյս կտրած էր:

Օր մը, սակայն, որսորդը մոռցաւ գոցել վանդակին դռնակը: Սկիւռը վանդակէն դուրս ցատկեց, նստաւ բաց պատուհանին եզերքը: Հոնկէ ալ պարտէզ ցատկեց եւ, ծառէ ծառ ցատկոտելով, հասաւ հայրենի անտառ՝ իր բոյնը, իր սիրելի սկիւռիկներուն քով:

Սկիւռիկները հարցուցին անոր.

— Մայրիկ, ինչպէ՞ս կ'ապրէիր որսորդին քով:

— Որսորդը զիս շատ կը սիրէր: Ամէն օր համով ուտելիքներ կու տար ինձի: Գիշերներն ալ կը քնանայի մետաքսէ փափուկ բարձի վրայ:

— Հապա ինչո՞ւ փախար որսորդին քովէն,— հարցուցին ձագուկները:

Բայց այդ վայրկեանին սաստիկ փոթորիկ բարձրացաւ: Եւ ծառերուն սօսափինէն ձագուկները չլսեցին մայր սկիւռին պատասխանը...



**սկիւռ
սօսափին
անկին**

? Չարցումներ եւ հրահանգներ

1. Որսորդը ինչպէ՞ս կը խնամէր մայր սկիւռը:
2. Դուք կրնա՞ք ըսել թէ մայր սկիւռը ինչ պատասխան տուաւ ձագուկներուն երկրորդ հարցումին. ինչ կը պակսէր սկիւռիկին:



Կարդացէ՛ք հետեւեալ երկու շարք բառերը՝ ուշադիր հետեւելով բառին սկիզբը **օ** հնչիւնին գրութեան.

ա) **օտար**, **օտարական**, **օտարութիւն**, **օգուտ**, **օր**, **օդ**, **օձ**, **օճառ**.

բ) **ով**, **ովկիանոս**, **ովասիս**, **Ովսաննա**:

Յիշենք.

Բառերուն սկիզբը օ հնչիւնը կը գրուի օ-ով՝ բացի այն պարագայէն, երբ բառին երկրորդ գիրը վ է:



Ա. Դարբնի

ՊԱՆԴՈՒԽՏ¹ ՄԱՆՈՒԿԸ ԵՒ ԱՐԱԳԻԼԸ

Եկէք, եկէք,
Հայրենիքէն արագիլ է մեզի
եկած:
Տեսէք, տեսէք,
Փոխուած է ան, գեղեցկացած:

Թեւիկներուն
Արեգակի շող է բերած,
Տոտիկներուն
Հայաստանի հող է բերած:

Ո՛վ արագիլ, բիր երանի²,
Որ Սեւանի ջուրն ես խմած
Եւ հայրենի երկինքին տակ
Ես քնացած:

Ա՛խ, երանի, որ տեսած ես
Մեր լեռները ձինակատար,
Ա՛խ, երանի, որ տեսած ես
Հսկայ բարտի, կանաչ
անտառ:

Եկնր, քեզմէ
Հայրենիքին կարօտն առնենք,
Ծաղիկներուն եւ վարդերուն բոյրը շնչենք:

Ո՛վ արագիլ,
Երբ Հայրենիք թռչիս նորէն,
Դուն մեզ ալ տար,
Որ ուժ առնենք մեր մայր հողէն,
Հայրենիքը մենք լաւ ճանչնանք,
Որ *հայ* մեծնանք ու *հայ* մնանք:

ծինակատար
ծինապատ
ծինափայլ
ծինամարդ
ծինագնդակ

¹ պանդուխտ — հայրենիքէն հեռու ապրող
² բիր երանի — հազար երանի, շատ երանի

? Հարցումներ եւ հրահանգներ

1. Պանդուխտ մանուկը ինչո՞ւ ուրախացած կը կանչէ իր ընկերները:
2. Ան ինչո՞ւ երանի կու տայ արագիլին:
3. Ի՞նչ կը խնդրէ արագիլէն. ինչո՞ւ:
4. **Ձիրար ամբողջացնելով՝ ըսէք՝ ի՞նչ նոր բաներ սորվեցաք մեր Հայրենիքի՝ Հայաստանի մասին:**



Ուշի ուշով կարդանք եւ տեսնենք թէ **ու** ձայնաւորը ինչպիսի՞ հնչիւններու միջեւ գրուած է.

Աստուած, Յունուար, պատուէր, հաշուել, սիրուիլ, պահուըտիլ:



ՍՈՐԿԻՆԵ.

Բաղաձայն եւ ձայնաւոր հնչիւններուն միջեւ **վ** հնչիւնը կը գրուի **ու**-ով:

Բացառութիւն են **սորվիլ, ժողվել** բառերը:

ՆՇԱՆԱԻՈՐ ՄԱՐԴԻԿ ԵՒ ԼԱՒ ԳՈՐԾԵՐ



ՄԵՍՐՈՊ ՄԱՀՏՈՑԻՆ



Ո՛վ մեծագործ՝
Մեսրոպ Մաշտոց,
Մեր առաջին
Բացուած դպրոց:

Ամէն գիրդ՝
Անձէթ ճրագ,
Մեզ հայ պահող
Անմար կրակ:

Մեր առաջին
Լեզուի տաճար,
Լուսապայծառ²
Հայոց հանճար:

Դուն մեր Մեծ պապ
Հացիկ գիղէն,
Մշոյ դաշտի
Քաղցրիկ հողէն:

Եւ շուրթերով
Մեր մանկական
Քեզի պարծանք
Յաւերժական³:

յաւերժ յաւերժական յաւերժութիւն

¹ մեծագործ — մեծ գործեր կատարած
² լուսապայծառ հանճար — պայծառ՝ սրտեղծող միտք ունեցող մարդ
³ յաւերժական — յաւիտենական՝ միշտ տեւող

Հարցումներ եւ հրահանգներ

1. Ո՛ր ծնած է Մեսրոպ Մաշտոց:
2. Գիտէ՞ք արդեօք թէ ո՛ր կը գտնուի անոր գերեզմանը:
3. Ոտանաւորին մէջ ինչերո՞ւ հետ կը համեմատուին Մեսրոպ Մաշտոց եւ հայերէն գիրերը:
4. Ի՞նչ է վերջին տունին միտքը. երախաները ինչպէ՞ս կ'արտայայտեն իրենց երախտագիտութիւնը Մեսրոպ Մաշտոցի հանդէպ:
5. Գրեցէ՞ք փոքրիկ պատմութիւն մը՝ «Մեսրոպ Մաշտոցը» վերնագիրով՝ օգտուելով Մեսրոպ Մաշտոցի եւ հայերէն գիրերուն մասին ձեր սորված դասերէն:



Կարդացէ՛ք հետեւեալ բառերը եւ ուշադրութիւն դարձուցէ՛ք **վ** հնչիւնի գրութեան.

կաւ, ցաւ, թիւ, հագիւ, թել, տերել, աւագ, զաւակ, խաւար, հիւանդ, ցաւիլ, աւել, լուսաւոր, գունաւոր:



ՍՈՐԿԻՆՔ.

Ձայնաւորներէն ետք եւ երկու ձայնաւորներուն միջեւ **վ** հնչիւնը կը գրուի **ւ**-ով:

Բացառութիւն է **ո** ձայնաւորը, որմէ ետք **վ** հնչիւնը կը գրուի **վ**-ով (քանի որ այդ պարագային **ու** կը կարդացուէր):

Օրինակ՝ **ծով, զով, կողով, խողովակ:**

ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐԻՉԸ

Շատ ժամանակ անցած է այն օրէն, երբ Մեծն Մաշտոցը ստեղծած է հայերէն գիրերը: Այդ ընթացքին մեր նշանաւոր գրողները գրած են շատ մատեաններ՝ գիրքեր: Սակայն զանոնք ձեռքով կը գրէին, եւ քիչ մարդիկ կրնային կարդալ այդ գիրքերը: Հազարաւոր գիրքեր պէտք էին, որ ժողովուրդը կարդար, մարդոց միտքը լուսաւորուէր, եւ հայը Հայ մնար ու զոյատեւէր: Շատ դժուար էր ձեռքով այդքան գիրք գրելը:

Երոպայի մէջ շատոնց գիրքեր կը տպէին: Սակայն Հայաստան տպարան չկար տակաւին:

Եւ ահա հայրենասէր մարդ մը՝ Յակոբ Մեղապարտ անունով, 1512-ին յաջողեցաւ հիմնել տպարան¹ մը՝ Իտալիոյ Վենետիկ քաղաքը: Այդ տպարանին մէջ ան տպագրեց հինգ գիրք: Անոնք հայերէն առաջին տպագիր գիրքերն էին: Այդ գիրքերը տպագրուած էին հայերէն գեղեցիկ գիրերով ու զարդարուած էին հայկական գեղեցիկ զարդերով:

Յակոբ Մեղապարտը մեր պատմութեան մէջ կը մնայ իբրեւ առաջին տպագրիչ եւ մեծ *հայրենասէր*:

Հայ ժողովուրդը, իբրեւ յարգանքի նշան, Երեւանի տպարաններէն մէկը կոչած է Յակոբ Մեղապարտի անունով եւ կանգնած է իր հայրենասէր մեծ զաւակին արձանը:



տպել տպարան տպագիր տպագրիչ

¹ տպարան հիմնել — տպելու գործարանի հիմը դնել՝ տպելու գործարան հիմնադրել

Չարցումներ եւ հրահանգներ

1. Ո՞վ է հայ առաջին տպագրիչը:
2. Ո՞ր տպագրուած են առաջին հայերէն գիրքերը եւ նրբ:
3. Հայ ժողովուրդը ինչպէ՞ս անմահացուցած է իր արժանաւոր զաւակին յիշատակը:



1. Դասին մէջէն գտէք եւ ընդօրինակեցէք այն բառերը, որոնց մէջ **ու** ձայնաւորը կը կարդացուի **վ**.
2. Ուշադրութիւն ըրէք բառին սկիզբը **վ** հնչիւնին գրութեան. **վերջ, վախ, վէճ, վագել, վէրք, վնաս, վճարել, Վենետիկ:**



ՍՈՐՎԻՆԸ.

Բառերուն սկիզբը **վ** հնչիւնը կը գրուի **վ** գիրով:
Վ-ով սկսող բառերը իրենց գրութիւնը կը պահեն նաեւ բառերուն մէջ՝ անոնցմով բարդ եւ ածանցաւոր բառեր կազմելու ատեն:
Օրինակ՝ վերջ — տարեվերջ, վնաս — անվնաս, վախ — աստուածավախ, վճար(ել) — անվճար, վայր — սրբավայր:

ՈՎ ՀՆԱՐԱԾ Է ԳՈՒՆԱՒՈՐ ՀԵՌԱՏԵՍԻԼԸ



գիւտ գիւտարար

Արային հայրը հեռատեսիլ կը դիտէր: Արան ալ դասերը սերտելէ ետք՝ նստաւ հեռատեսիլին առջեւ: Շատ հետաքրքրական շարժանկար մըն էր կենդանիներու մասին: Ան հօրը դիմելով՝ ըսաւ.

— Հայրիկ, ինչ հրաշալի բան է գունաւոր հեռատեսիլը: Ո՞վ ըրած է անոր գիւտը¹:

— Մեր հայրենակիցներէն² մէկը՝ Յովհաննէս Ադամեանը,— ըսաւ հայրը:

— Մեր հայրենակիցը,— զարմացաւ Արա,— իսկ ես կը կարծէի թէ ամերիկացիները կամ ճաբոնցիները հնարած են:

— Ո՛չ, որդիս, գունաւոր հեռատեսիլին գիւտը կը պատկանի հայ Ադամեանին: Այդ մասին պէտք է բոլորը իմանան:

Յովհաննէս Ադամեանը ծնած է Պաքու՝ 1879-ին: Ուսումը առած է նախ՝ Պաքու, ապա՝ Գերմանիա:

1907-ին Յովհաննէս Ադամեանը աշխարհի մէջ առաջին անգամ յաջողեցաւ ցուցադրել գունաւոր պատկերներ:

1925-ին՝ Երեւանի համալսարանին մէջ աշխատելու ատեն, Ադամեանը յաջողեցաւ ստանալ երեք գոյնի պատկերներ: Անոր այս գիւտը առաջին անգամ կիրարկուած է Լոնտոն, 1928-ին: Հետագային՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու «Գոլումպիա» Ընկերութիւնը Նիւ Եորքի մէջ կատարած է փորձնական ցուցադրում, իսկ 1951—1953-ին ընդունած է Ադամեանի գիւտը:

Այսպէս՝ գունաւոր հեռատեսիլին գիւտը կը պատկանի մեր հայրենակից Յովհաննէս Ադամեանին:

Ադամեանը իր կեանքին վերջին տարիները կ'աշխատէր Ռուսաստանի Լենինկրատ քաղաքը (իմա՝ Սանկտ-Փետերպուրկ): 1932-ին վախճանեցաւ³ ու թաղուեցաւ Լենինկրատ: Սակայն 1970-ին մեծ գիւտարար⁴, աշխարհահռչակ⁵ գիտնական Յովհաննէս Ադամեանի աճիւնը⁶ տեղափոխուեցաւ Երեւան եւ ամփոփուեցաւ⁷ հայ նշանաւոր մարդոց յատուկ գերեզմանատունի՝ Պանթէոնի մէջ:

¹ գիւտ ըրած է — ոչ մէկուն յայտնի եղող բան մը գրած է
² հայրենակից — միեւնոյն հայրենիքի զաւակ
³ վախճանեցաւ — մեռաւ (մեծ մարդոց համար կ'ըսուի)
⁴ գիւտարար — գիւտ ընող
⁵ աշխարհահռչակ — ամբողջ աշխարհին մէջ հռչակուած՝ անունը փարածուած
⁶ աճիւն — մեռելի մարմնի մնացորդ՝ փոշի
⁷ ամփոփուեցաւ — հոս՝ թաղուեցաւ

? Հարցումներ եւ հրահանգներ

1. Ո՞վ է Յովհաննէս Ադամեան:
2. Ան է՞ր կատարեց գունաւոր հեռատեսիլին գիւտը:
3. Պատմեցէ՛ք այս դասը:

Հետեւեալ բառերուն մէջ կէտերուն տեղ գրեցէ՛ք վ հնչիւնը արտայայտող երեք գիրերէն մէկը՝ ու, ւ, վ.
գունա.որ, արե., ան.ճար, կողո., հաշի., տերե., զա.ակ, ծա.րա., .արդ, ո.կիանոս, ո., զո., պատի., Ո.սաննա, ան.ախ, բարե., հովի., ն.էր, ան.երջ, պատ.ական, ամսա.ճար, հո., անձրե., ծո., տարե.երջ, առ.ակ, Զ.արթ, .էճ, Ն.արդ, պահ.ըտիլ, տեղափոխ.իլ:

ԾԵՐՈՒՆԻ ՆԿԱՐԻՉԸ

Ա

Պզտիկ Աստղիկը ծաղիկներ շատ կը սիրէր: Երբ դաշտ կ'երթար, գոյնզգոյն ծաղիկներ կը ժողվէր եւ փունջ կը կազմէր:

Օր մը Աստղիկը ծերունի մը տեսաւ որ ձորին մէջ՝ քարին մը վրայ նստած, կը նկարէր: Աստղիկը կամացուկ մը մօտեցաւ նկարիչին: Նկարիչը նայեցաւ Աստղիկին եւ բարի ժպիտով մը ժպտեցաւ անոր: Աստղիկը գնաց նստաւ ծերունիին քով եւ սկըսաւ ուշադիր նայիլ մերթ ծերունիին, մերթ ալ անոր գծած նկարին:

— Անունդ ինչ է, աղջիկս, ուրկէ՞ կու գաս,— հարցուց ծերունին:

— Անունս Աստղիկ է. դաշտէն կու գամ: Ծաղիկներ կը քաղէի: Կ'ուզեմ այս աղուոր փունջը ձեզի նուիրել: Եթէ կ'ուզէք, երթամ կարմիր կակաչներ ալ քաղեմ ձեզի համար:

Նկարիչը Աստղիկին ձեռքէն առաւ ծաղկեփունջը, հոտոտեց զայն եւ ըսաւ.

— Եկուր միասին երթանք կակաչներ քաղելու:

Նկարիչը եւ Աստղիկը, իրարու ձեռք բռնած, դաշտ գացին: Անոնք ուրախ–գուարթ կը խօսակցէին, կը խնդային: Յանկարծ Աստղիկը կակաչներ տեսաւ հեռուն: Վազեց եւ խոշոր կակաչ մը քաղեց: Բայց անոր կարմիր թերթիկները անմիջապէս թափեցան:

— Հոգ չէ, մեծ հայրիկ,— ըսաւ Աստղիկ,— ասոնց ժամանակը անցած է արդէն: Գարնան հոս շատ կակաչներ կ'ըլլան: Ես ձեզի համար գալ տարի անպայման պիտի քաղեմ անոնցմէ:

Բաժնուելէ առաջ ծերունին թուղթի մը վրայ գրեց իր հասցէն ու տուաւ Աստղիկին:

Բ

Անցան ձմրան ամիսները: Եկաւ գարունը: Կակաչները բացին իրենց կարմիր թերթիկները: Աստղիկը գնաց կակաչներ քաղելու: Ան կարմիր հագուստ հագած էր: Եւ ինք ալ կարծես կարմիր կակաչ դարձած՝ կը քաղէր ամէնէն աղուոր կակաչները եւ փունջ կը կազմէր:

Ահա ան Երեւան կ'երթար մայրիկին հետ: Ճամբան կակաչները սկսած էին թռմիլ: Աստղիկը շատ կը տխրէր ատոր համար:

Մայր ու աղջիկ վերջապէս գտան ծերունի նկարիչին տունը: Աստղիկը հնչեցուց դուռին զանգակը: Ծերունի նկարիչը բացաւ դուռը: Անոր դէմքին նոյն բարի ժպիտը կար: Նկարիչը ճանչցաւ Աստղիկը եւ ջերմօրէն համբուրեց զինք:

— Մայրիկս է,— ըսաւ Աստղիկը քաշուելով:

— Աստղիկը միշտ ձեր խօսքը կ'ընէր, անհամբեր կ'ուզէր այցելել ձեզի,— ըսաւ Աստղիկին մայրիկը:

— Մեծ հայրիկ, կակաչները թոռմեցան ճամբան: Ես այնպէս կ'ուզէի...,— յուզուած շշնջաց Աստղիկը:

Բայց յանկարծ պատէն կախուած շրջանակի մը մէջ տեսաւ թարմ կակաչներու փունջ մը եւ արցունքներու մէջէն ժպտեցաւ: Ան կը նայէր թոռմած փունջին, յետոյ շրջանակին մէջէն իրեն ժպտող կակաչներուն, որոնք երբեք-երբեք պիտի չթոռմէին:

Աստղիկը ապշած ու հիացած կը դիտէր պատէն կախուած միւս նկարներն ալ՝ ձիւնապատ լեռներ, հայկական տարազով՝ պարող աղջիկներ, Հայաստանի պայծառ գարնան տեսարաններ եւ շատ ու շատ ուրիշ նկարներ:

Աստղիկը յանկարծ փաթթուեցաւ ծերունի նկարիչին եւ սրբտազին համբուրեց անոր հրաշագործ² ձեռքերը:

Այդ ծերունին հռչակաւոր նկարիչ Մարտիրոս Սարեանն էր:

Գ

Ծաղիկները որքան կրնան ապրիլ. որքան կ'ապրին անոնք, մանաւանդ ծաղկամանին մէջ՝ օ՞ր մը, թէ՞ դարեր:

Փոքրիկ սեղանի մը վրայ ծաղկամաններով ծաղիկներ դրուած էին: Ոսկեդեղինն ու կարմիրը, կապոյտն ու մանուշակագոյնը, նարնջագոյնն ու ճերմակը կը վառուէին կանաչին վրայ: Անոնց մէկ մասը բերուած էր ծաղկանոցներէ, միւս մասը դաշտային էր: Արուեստանոցին մէջ անուշ բուրմունք մը կը տարածուէր:

Ալեհեր նկարիչը, հսկայական ճերմակ կտաւին առջեւ նըստած, վրձինն ու ներկապնակը ձեռքը, երկար կը նայէր ծաղիկներուն:

Յետոյ սկսաւ նկարել: Վրձինը կը բարձրանար ու կ'իջնէր այնպէս, որ կարծես նկարիչին ձեռքը ոչ թէ վրձին էր, այլ մուրճ, եւ ան ոչ թէ կը նկարէր, այլ կը կոփէր³ ծաղիկները, որոնք կարծես թէ կախարդական ուժով իրարու ետեւէ կը բացուէին ճերմակ կտաւին վրայ: Նկարիչը այնպէս տարուած էր աշխատանքով, որ աշխարհին վրայ իր համար միայն այդ ծաղիկները եւ

հրաշք
հրաշալի
հրաշագործ

¹ Կարազ — ազգային հագուստ

² հրաշագործ — հրաշք՝ չտեսնուած բան ստեղծող

³ կը կոփէր — բարձր ջերմութեամբ փաքացնելով եւ արագօրէն սառեցնելով՝ ամուրճ կարծր դարձնել



ներկերն էին, ծաղիկներու արբեցնող բուրմունքը ու նաեւ երգ մը, որ սկիզբ առեր է նկարիչի սիրտին մէջ ու երթալով անլի կ'ալեկոծէր իր հոգին: Այսպէս՝ ձերմակ կտաւը հետզհետէ ծաղկեցաւ, կենդանացաւ, իսկ երրորդ օրը, երբ ան յոգնած ձեռքով կտաւին վրայ դրաւ իր ստորագրութիւնը՝ «Մարտիրոս Սարեան», հրաշքը արդէն կատարուած էր... Այնուհետեւ ով որ կը նայէր նկարիչին ստեղծած կտաւին, կ'ըսէր. «Այս ծաղիկները դարեր պիտի ապրին»:

Չարցումներ եւ հրահանգներ

1. Ո՞վ էր ծերունի նկարիչը. Աստղիկը ինչպէ՞ս ծանօթացաւ անոր հետ:
2. Ծերունի նկարիչը ինչո՞ւ իր հասցէն տուաւ Աստղիկին:
3. Աստղիկը ինչո՞ւ յուզուեցաւ եւ համբուրեց ծերունի նկարիչին ձեռքերը:
4. Կրնա՞ք ըսել թէ ինչպիսի՞ մէկն էր նշանաւոր նկարիչ Մարտիրոս Սարեան. պատմեցէ՛ք:
5. Դասի առանձին մասերուն վերնագիրներ դրէ՛ք եւ պատմեցէ՛ք՝ ըստ մասերու:



Կարդացէ՛ք հետեւեալ բառերը՝ ուշադրութիւն դարձնելով *n*-ի արտասանութեան բառին սկիզբը.

որ, որդի, ոսկի, ոզնի, որս, ոչխար, ոռնալ, ոսպ, ոտք, ոտանաւոր:



ՍՈՐՎԻՆՔ.

Բառին սկիզբը *վօ* հնչումը կը գրուի *n* գիրով:

Բացառութիւն է *վոհմակ* բառը (գայլերու, գազաներու խումբ):



Կ. Գէորգեան

ԴԵՊՔ ՄԸ ՀԱՆՍ ՔՐԻՍԹԻԱՆ ԱՆՏԵՐՍԷՆԻ ԿԵԱՆՔԷՆ



սպասել
անսպասելի

Հանրային պարտէզին մէջ՝ ծառի մը տակ, կեցած էր պզտիկ աղջիկ մը եւ շագանակ կը ծախէր: Ոչ մէկը շագանակ կը գներ իրմէ:

— Շագանակ գնեցէք, պարոն,— խնդրեց աղջիկը անցորդի մը.— այսօր ոչ մէկ հատ ծախած եմ, տաք են տակաւին:

Այսպէս խօսելով՝ աղջիկը շագանակ լեցուց անոր վերարկուին գրպանը: Անցորդը մեղաւորի պէս ժպտեցաւ ու նայեցաւ աղջկան:

— Ես պիտի չկարենամ գնել այսքան լաւ խարկած շագանակները, աղջիկս: Քովս դրամ չկայ,— ըսաւ անցորդը եւ ձեռքը տարաւ գրպանը, որ հանէ շագանակները:

— Ո՛չ, ո՛չ, մի՛ հանէք. դրամ պէտք չէ:

Անցորդը իր խոշոր ափերուն մէջ առաւ աղջկան պզտիկ թաթիկները եւ հարցուց.

— Անունդ ի՞նչ է:

— Քրիսթինէ:

— Իմ անունս ալ Հանս Քրիսթիան Անտերսէն է: Կ'ուզես՝ հիմա քեզի գեղեցիկ հեքիաթ մը պատմեմ: Այդ հեքիաթը ոչ մէկը լսած է տակաւին: Ես զայն քեզի կը նուիրեմ:

Երբ Անտերսէնը հեքիաթը կը պատմէր, Քրիսթինէն խնդալէն կը մարէր:

Անցան տարիներ: Օր մըն ալ՝ փողոցէն անցնելու ատեն, կառքին մէջէն մէկը կանչեց Քրիսթինէն: Այդ մարդը Հանս Քրիսթիան Անտերսէնն էր, որ ճանչցած էր Քրիսթինէն: Կառքը զիրենք տարաւ հագուստի խանութ մը: Անտերսէնը գեղեցիկ հագուստ մը գնեց Քրիսթինէին համար:

Քրիսթինէն երջանիկ էր, որ հանդիպեցաւ նշանաւոր հեքիաթագիր Անտերսէնին եւ շատ յուզուած էր այդ անսպասելի նուէրին համար:

Հարցումներ եւ հրահանգներ

1. Քրիսթինէն ինչպէ՞ս ծանօթացաւ նշանաւոր հեքիաթագիր Անտերսէնի հետ:
2. Անտերսէնը դրամի փոխարէն ինչպէ՞ս վարձատրեց Քրիսթինէն:
3. Կրնա՞ք ըսել թէ Քրիսթինէն եւ Անտերսէնը ինչո՞վ կը նմանէին իրարու:
4. Դուք գիտէ՞ք որ Անտերսէնը նշանաւոր հեքիաթագիր մըն է: Կարդացէ՞ք անոր հեքիաթներէն որեւէ մէկը:

1. Դասին մէջէն գտէ՞ք *մեծ, գնել, անմեղ, գէշ, տգեղ, լալ, դժբախտ, աննշան, սպասելի* բառերուն *հականիշնէրը* եւ անոնցմէ երկու զոյգը գործածեցէ՞ք նախադասութիւններու մէջ:

2. Սորվինք բառին սկիզբը *h* հնչիւնը *j*-ով գրուող բառերու ուղղագրութիւնը.

յաջողիլ, յաղթել, յառաջ, յառաջադէմ, յանցանք, յաջորդ, յաճախ, յայտնի, յատակ, յետոյ, յիշել, յիսուն, յոգնիլ, յոյս, յօնք, յորդ (առատ), յստակ, Յակոբ, Յարութիւն, Յովհաննէս, Յովսէփ, Յունուար...

ՈՒՈԼԹ՝ ՏԻՉՆԻ

Մանկական շարժանկարի մեծ վարպետ է Ուոլթ Տիզնին: Կը պատմէ թէ տարիներ առաջ, երբ նստած կ'աշխատէր արուեստանոցին մէջ, չորս կողմը մուկեր կը վազվզէին: Ինք երբեմն կը նկարէր զանոնք: Իսկ պզտիկ մկնիկի մը հետ Ուոլթ Տիզնին նոյնիսկ բարեկամացած էր:

— Գիշերը յաճախ կը մնայի արուեստանոցին մէջ՝ աշխատելու,— հետագային կը յիշէ Տիզնին:— Նկարիչները իրենց նախաճաշին մնացորդը կը նետէին աղբի սնտուկը: Կը տեսնէի թէ մուկերը ինչպէս կը կրծոտէին այդ մնացորդները:

Օր մը յաջողեցայ բռնել մուկերէն մէկը եւ զայն դրի սնտուկի մը մէջ: Յետոյ բռնեցի երկրորդը, երրորդը: Կը կերակրէի եւ կը վարժեցնէի զանոնք: Մկնիկները այնքան վարժուեցան ինձի, որ ազատ եւ անվախ կը պտըտէին իմ գծատախտակիս վրայ: Մուկերէն մանաւանդ մէկը կը սիրէր նստիլ եւ նայիլ թէ ինչպէս կը նկարէի:

Օր մը թուրթին վրայ կկզած մկնիկին շուրջը սեւ շրջանակ մը գծեցի: Եւ երբ ան կը փորձէր դուրս գալ այդ շրջանակէն, մատիտով թեթեւ մը կը զարնէի անոր քիթիկին: Վերջապէս մկնիկը սորվեցաւ որ գծուած շրջանակէն կարելի չէ դուրս գալ:

Ահա այսպէս ստեղծուեցաւ մանկական ապագայ շարժանկարներուն հերոսը՝ Միքի Մաուսը:

Միքի Մաուզը ունի մեծ ու կլոր ականջներ, կլոր քիթ, երկայն պոչ, հագած է մեծ ոտնամաններ: Նիւ Եորքի մէջ Միքի Մաուսին շարժանկարները կը հրապուրէին թէ պզտիկները եւ թէ մեծերը: Միքի Մաուսը սիրելի էր իր բարութեամբ, իր տեսքով ու քաջութեամբ: Կ'օգնէր տկարներուն, կը խրատէր որ անոնք մոռնան իրենց ցաւն ու վիշտը:

Ինչպէս Չարլի Չափլինի անունը կ'անցնէր բերնէ բերան, այնպէս ալ Միքի Մաուսին անունը տարածուեցաւ ամբողջ աշխարհին մէջ:

Ուոլթ Տիզնին ստեղծած է մանկական բազմաթիւ շարժանկարներ՝ «Ձիւնաթոյրն ու եօթը թզուկները», «Փինոքիօ»ն, «Ֆանթազիա»ն եւ այլն:

Ուոլթ Տիզնին 29 անգամ արժանացած է ամենաբարձր «Օսքար» մրցանակին: Ասիկա բացառիկ պատիւ մըն է արուեստագէտի մը համար:

հռչակաւոր
աշխարհահռչակ

Չարցումներ եւ հրահանգներ

1. Ո՞վ է Ուոլթ Տիզնին:
2. Պատմեցէ՛ք՝ ինչպէ՛ս ստեղծուեցաւ Միքի Մաուս հերոսը. իսկ գիտէ՞ք թէ ինչ կը նշանակէ Միքի Մաուս:



3. Տեսաձ էք Միքի Մաուսէն շարժանկար մը. պատմեցէք անոր բովանդակութիւնը:
4. Իսկ տեսաձ էք Չարլի Չափլինի շարժանկարները: Կը սիրէք անոր խաղը. ինչո՞ւ:
5. Դի՞ք ինչ կ'երագէք դառնալ. ինչ պէտք է ընէք՝ ձեր նպատակին հասնելու համար:




1. Տրուած բառերուն մէջէն գտէք **հոմանիշ** բառերը եւ գրեցէք քով քովի. անոնցմէ երեք զոյգը գործածեցէք նախադասութիւններու մէջ:

գիր, վաճառել, փոքրիկ, ջանասէր, մեծ, ննջել, ծախել, ընթերցել, գոցել, պզտիկ, աղուոր, աշխատասէր, կարդալ, քննաւ, փակել, տառ, խոշոր, գեղեցիկ, ջինջ, քաջ, համեստ, աղտոտ, գոռոզ, անսիրտ, յստակ, զօրաւոր, խոնարհ, կեղտոտ, հպարտ, անգութ:

Օրինակ՝ գիր — տառ:

2. Սորվի՞նք բառին սկիզբը **h** հնչիւնը **h**-ով գրուող բառերուն ուղղագրութիւնը.

հագուստ, հաղորդել, հաճույք, հաճելի, հաճիլ, հականիշ, հոմանիշ, համառօտ, համարձակ, համերգ, համբերել, համբոյր, համրել, հանգոյց, հաշիւ, հաւնիլ, հրաւեր, համեղ, հեղեղ, հրաշք, հռչակաւոր, հայելի, հանապազորդ, հանդերձարան, հարթ (ուղիղ, շիտակ), հորթ (կովու ձագ)...





ՀԱՅՐԵՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹՐ ԳԱՌՆԱՐԱԾ

Մեր Դաւիթ հսկան
Դեռ մանուկ մըն էր եօթը տարեկան:
Մանուկ մը կ'ըսեմ, բայց այնքան ուժեղ՝
Իր համար նոյնն էր գազան թէ մժեղ¹:
Քշեց գառները մեր հովիւ հսկան,
Ելաւ Սասունի սարերն աննման².

— Էյ, ջան սարեր,
Սասնայ սարեր...,—

Երբ կանչեց, անոր ձայնէն ահաւոր³
Աղմուկ-աղաղակ ինկաւ սար ու ձոր:
Վայրի գազաններ որջերէն փախան,
Սարուձոր ինկան, ցիրուցան եղան⁴:
Դաւիթը վազեց անոնց ետեւէն,
Մէկը՝ այս սարէն, մէկը՝ այն ձորէն
Աղուէս, նապաստակ, գայլ, եղնիկ բռնեց,
Հաւաքեց, բերաւ գառներուն խառնեց
Ու դէպի Սասնայ քաղաքը քշեց:

Սասուն սասունցի

¹ մժեղ — խայթող պզտիկ միջապ մը
² աննման — շատ գեղեցիկ, նմանը չունեցող
³ ահաւոր — սարսափելի, վախ ազդող
⁴ ցիրուցան եղան — այս ու այն կողմ ցրուեցան

Հարցումներ եւ հրահանգներ

1. Սասունցի Դաւիթը ինչպիսի՞ հովիւ մըն էր:
2. Կարդացէ՛ք Սասունցի Դաւիթի ուժն ու քաջութիւնը ցոյց տողերը:
3. Լսած է՞ք թէ Սասունցի Դաւիթի անունով ինչէր կան Երեւանի մէջ:
4. Պատմեցէ՛ք այս ոտանաւորին բովանդակութիւնը:

1. Ընթողինակեցէ՛ք հետեւեալ բառերը՝ կէտերուն տեղ գրելով **h** կամ **j** գիրը.

.այ, .աղթել, .աճախ, .ապա, .աց, .որդ (առատ), .ամեստ, .ետոյ, .աջորդ, .առաջադէմ, .երոս, .եծիկ, .անկարծ, .անդիմանել, .որթ (կովու ձագ), .իսուն, .պարտ, .օնք, .ռիփսիմէ, .արութիւն, .այտնի, .անձնել, .ասակ, .ամբարձում, .իշատակ, .ոգնիլ, .աջողիլ, .րաման, .րամանատար, .արթ (շիտակ, ուղիղ):

2. Հետեւեալ բառակապակցութիւնները ըսէ՛ք բարդ բառերով.

գառնուկ արածող, միս ուտող, խոտ ուտող, աշխատանքը սիրող, հեքիաթ գրող, քաջ սիրտ ունեցող, կարճ հասակ ունեցող, հայրենիքը սիրող, բարին կամեցող:

Օրինակ՝ բարին կամեցող — բարեկամ:

ՓՈՔՐ ՄՀԵՐԻ ԺԱՅՈՒՆ

Փոքր Մհերը որդին է Սասունցի Դաւիթի: Մհերն ալ քաջ էր ու հսկայ՝ ինչպէս իր հայր Դաւիթը եւ իր պապ Առիւծ Մհերը:

Մհերը պզտիկ էր տակաւին, երբ օր մը նստած էր պաղ աղբիւրի մը քով՝ նախրապաններու¹ հետ:

Յանկարծ լեռան լանջէն հսկայ ժայռ մը կը փրթի ու գլոր-գլոր կը գլորի վար՝ շիփ-շիտակ նախիրի եւ իրենց վրայ:

Փոքր Մհերը իսկոյն կը թռչի տեղէն դէպի հսկայ ժայռը, թիկունքը կու տայ անոր ու կը կեցնէ զայն: Եւ ինք ալ կարծես հսկայ ժայռ մը՝ երկու ժայռեր կը կենան քով քովի:

Նախրապաններն ափիբերան², ուրախացած՝

- Ապրիս,— կ'ըսեն,— Սասնայ Մհեր,
- Դուն փրկեցիր նախիրն ու մեզ:
- Փանք քեզ, Աստուած, հրաշք է, հա՛...
- Այսպէս ալ ո՛ւժ... Դեռ երախայ...



Գ Զարցումներ եւ հրահանգներ

1. Պատմեցէք՝ այս փոքրիկ պատմութիւնը:
2. Նախրապանները ինչպէ՞ս ընդունեցին Փոքր Մհերին քաջագործութիւնը:
3. Ո՞վ է Փոքր Մհեր. ինչպիսի՞ մէկն էր ան:



1. Դասին մէջէն գտէք *պզտիկ, արի, խոշոր, դեռ, անմիջապէս, մանուկ* բառերուն հոմանիշները եւ անոնցմէ երկու զոյգը գործածեցէք նախադասութիւններու մէջ:
2. Սորվինք *բ*-ով գրուող բառերու ուղղագրութիւնը.
աղբիւր, աղբ, եղբայր, բողբոջ, երբ, դարբին, ճամբայ, նուրբ, խաբել, խաբեբայ, հարբուխ, հրաբուխ, զամբիղ, համբոյր, համբերել, հարբած, սուրբ, սրբել, Համբարձում, Յակոբ, Սերոբ...

Նախիր Նախրապան

¹ Նախրապան — նախիր (կովեր, եզներ) արածող
² ափիբերան — զարմացած

ՎԱՐՂԱՆ ԶՕՐԱՎԱՐԻ ԿԱՂՆԻՆ

Շատ տարիներ առաջ Հայաստանի Իջեան քաղաքէն քիչ մը հեռու՝ Ակնաղբիւր գիւղին քով, հսկայ կաղնի մը կար: Անոր ամէն մէկ ճիւղը ծառի մը չափ էր: Այդ կաղնիին տակ հովիւր անձրեւէն կամ արեւէն կը պաշտպանէր իր հօտը: Իսկ ծառին վրայ փորուածք մը կար, ուր ութ-ինը մարդ կրնար տեղաւորուիլ: Կաղնիին տակէն կը հոսէր ջինջ աղբիւր մը, որուն ջուրը բուժիչ էր: Ատոր համար ալ ժողովուրդը Զօրաւոր աղբիւր կոչած էր զայն:

Այդ կաղնիին եւ աղբիւրին մասին շատ աւանդութիւններ¹ կան: Անոնցմէ մէկը կը պատմէ թէ երբ Վարդան Մամիկոնեանը, թշնամիին յաղթած, Հայաստան կը վերադառնար, իր զօրքով Զօրաւոր աղբիւրին քովէն կ'անցնի: Բոլորը ծարաւ էին եւ խմելու ջուր կը փնտռէին:

Յանկարծ կը տեսնեն որ դիմացի ժայռին տակէն ջուր կը հոսի: Կը խմեն այդ ջուրէն ու կը հանգստանան:

Վարդան Զօրավարը կաղնիի շիւ² մը կը տնկէ աղբիւրին քով: Կ'ըսեն թէ այդ պզտիկ շիւը հսկայ կաղնի մը կը դառնայ: Ատոր համար ալ գիւղին բնակիչները Զօրավարի կաղնի կոչած են այդ ծառը:

Այդ տեղը երկար տարիներ սրբավայր եղած էր: Սովորութիւն դարձած էր, որ գիւղին երիտասարդները, պատերազմի երթալէ առաջ, ջուր խմէին այդ աղբիւրէն որ ուժ առնէին: Գիւղին մեծերը կ'ըսէին. «Եթէ Զօրաւոր աղբիւրէն ջուր խմէք եւ ձեռքերնիդ քսէք Քաջն Վարդանի տնկած կաղնիին, մեռնիլ չկայ ձեզի»:

Վարդան Զօրավարի հսկայ կաղնին կայծակէն այրեցաւ ու գետին տապալեցաւ:

Հետագային Զօրավար Յովհաննէս Բաղրամեանը կաղնիէն տակաւին կանաչ մնացած շիւ մը կտրեց ու տնկեց աղբիւրին քով: Շիւը հիմա մեծ ծառ մը դարձած է:

Վարդան
Մամիկոնեան

Յովհաննէս
Բաղրամեան

¹ **աւանդութիւն** — սերունդէ սերունդ բերանացի պատմութիւնով՝ մեզի հասած պատմութիւն

² **շիւ** — բարակ ու կանաչ ճիւղ

Հարցումներ եւ հրահանգներ

1. Ո՞ր կը գտնուէր Վարդան Զօրավարի կաղնին. ինչպիսի՞ ծառ մըն էր:
2. Աւանդութիւնը ինչ կը պատմէ այդ կաղնիին եւ բուժիչ աղբիւրին մասին:
3. Ինչէ՞ն տապալեցաւ կաղնին, եւ ո՞վ նոր ծառ տնկեց անոր տեղը: Ի՞նչ խորհուրդ ունի ատիկա:
4. Պատմեցէ՛ք՝ ինչ գիտէք Վարդան Մամիկոնեանի մասին:

1. Փորձեցէ՛ք բացատրել **զօրավար** եւ **սրբավայր բարդ բաներուն** ուղղագրութիւնը. ինչո՞ւ երկու ձայնաւորներուն միջեւ **վ** հնչիւնը **վ-ով** գրուած է եւ ոչ թէ **ւ-ով**:

2. Դասին մէջ գտէ՛ք այն բառերը, որոնք նոյնպէս կը վերաբերին **վ** հնչիւնին գրութեան, եւ բացատրեցէ՛ք այդ բառերուն ուղղագրութիւնը (10 բառ կրնաք գրել):

ԽՈՅ¹ ՅԱԿՈՒԸ

Օմար փաշան մեծ զօրքով յարձակեցաւ Ջէթունի վրայ: Քաջ գէյթունցիները հերոսաբար կը կռուէին փաշային զօրքին դէմ: Փաշային բանակէն շատ զինուորներ վիրաւորուեցան եւ սպաննուեցան: Փաշան կատղեցաւ: Հրամայեց քաղաքին շուրջը գտնուող ձիթենիները կտրտել:

Ջէթունցիներուն մէջ կար կարճահասակ եւ քաջասիրտ մարդ մը: Անունը Յակոբ էր: Ան մօտեցաւ իրենց հրամանատարին եւ ըսաւ.

— Երագիս մէջ հրամայեցիր ինձի որ սպաննեմ թուրք փաշան:

— Այո՛, այո՛,— գոչեցին գէյթունցիները:

— Ուրեմն՝ սպաննէ՛,— ըսաւ հրամանատարը:

Յակոբը մտածեց ու գտաւ ճարը: Հօտին ամէնէն մեծ խոյին մորթը հանելով՝ մտաւ անոր մէջը: Եւ որպէս խոյ՝ խառնուեցաւ ոչխարներուն: Անոնք կ'երթային հանգչելու փաշային վրանին քով:

Առտուն կանուխ փաշան վրանէն դուրս ելաւ՝ լուացուելու եւ աղօթք ընելու: Խոյ Յակոբը ատրճանակի մէկ հարուածով սպաննեց զինք: Փաշային զինուորները, տեսնելով անոր մահը, ասդին-անդին փախան:

Եւ Ջէթունը ազատեցաւ:

հրաման
հրամանատար

Չարցումներ եւ հրահանգներ

1. Պատմեցէք՝ Յակոբը ինչ հնար մտածեց՝ իր ժողովուրդը փրկելու համար:
2. Հնարամտութեան մասին ուրիշ պատմութիւն կրնա՞ք պատմել:

¹ խոյ — արու ոչխար



1. Դասին մէջէն գտէք եւ ընդօրինակեցէք այն բառերը, որոնց մէջ **ու**-ն կը կարդացուի **վ**:

2. Սորվինք **փ**-ով գրուող բառերուն ուղղագրութիւնը.

արփի, Արփի, փրփուր, կափարիչ, տափակ, եփել, ծեփել, երփներանգ (գոյնզգոյն), փեղկ, փարթամ (ճոխ, առատ), շամփուր, փախչիլ, փողկապ, փնտռել, փղոսկր (փիղին ակռաները)...

ԱՅԾԵՄՆԻԿ



այծեամ Այծեմնիկ

Շատ ու շատ դարեր առաջ թաթարներու հսկայական բանակը յարձակեցաւ Հայաստանի վրայ: Թշնամին պաշարեց¹ Հայաստանի մայրաքաղաք Անին:

Հայերը շատ քիչ էին թիով, բայց հերոսաբար կը պաշտպանէին իրենց հայրենի քաղաքը: Ամբողջ տարի մը քաղաքը պաշարուած մնաց: Սակայն թշնամին չկրցաւ Անի մտնել:

Կռիւր երթալով կը սաստկանար: Թշնամիին զօրքերը արդէն կը մօտենային մայրաքաղաքին պարիսպներուն:

Յանկարծ միջնաբերդին² վրայ Այծեմնիկ անունով քաջարի աղջիկ մը յայտնուեցաւ: Կանանց³ իր գունդով ան կը քարկոծէր թշնամիները, հսկայական վնասներ եւ մեծ դժուարութիւններ կը պատճառէր անոնց:

Թաթարներուն նետերը կը խոցէին⁴ աղջիկները, սակայն անոնք չէին հեռանար կռիւի դաշտէն: Այծեմնիկը, արհամարհելով ցաւ ու մահ, իր մարմինէն կը հանէր նետերը եւ անոնցմով կը խոցէր թաթարները: Ընկերուհիները կը հետեւէին իրենց քաջ հրամանատարին օրինակին:

Այծեմնիկին հերոսական արարքը⁵ զարմացուց նոյնիսկ թաթարները: Ան իր ընկերուհիներուն հետ քաջաբար կը կռուէր թշնամիին դէմ եւ կը պաշտպանէր իր հայրենիքը:

Դարեր անցան...

Անիի ակերակները ուսումնասիրելու ատեն՝ գիտնականները քաղաքի միջնաբերդին վրայ երիտասարդ կնոջ գանկ մը գտան. ան բազմաթիւ տեղերէ խոցուած էր նետերով:

Գիտնականներուն կարծիքով՝ ատիկա Այծեմնիկին գանկն էր:

Իր թշնամիներէ հայրենիքը հերոսաբար պաշտպանած հայուհին դարեր ետք ալ կը յիշուի իր հայրենակիցներուն կողմէ:

¹ պաշարեց — չորս կողմը բռնեց, շրջապարեց, օղակեց
² միջնաբերդ — քաղաքին մէջ բարձր տեղ՝ շրջապարուած պարիսպներով՝ բարձր պարերով
³ կանանց — կիներու
⁴ կը խոցէին — կը վիրաւորէին, կը ծակէին
⁵ արարք — հոս՝ քաջագործութիւն

? Հարցումներ եւ հրահանգներ

1. Ե՞րբ եւ ո՞ր կատարուած է այս դէպքը:
2. Պատմեցէ՛ք՝ ինչպիսի՞ մէկն էր Այծեմնիկը:
3. Նոր վերնագիր մը դրէ՛ք այս պատմութեան:



Դասին մէջէն գտէ՛ք եւ առանձին սիւնակներու մէջ ընդօրինակեցէ՛ք *h*-ի եւ *j*-ի ուղղագրութեան պատկանող բառերը (բառասկիզբ, բառամէջ, բառավերջ):

ՀՆԱՐԱԳԷՏ¹ ՏՂԱՆ

Ա

Այս դէպքը պատահած է շատ դարեր առաջ:

Օր մը Հայաստանի թագաւորին քով սուրհանդակ² մը եկաւ թշնամի թագաւորի մը կողմէ, երկայն փայտ մը յանձնեց անոր եւ ըսաւ.

— Այս փայտին մէջ՝ մէկ ծայրէն միւսը, բացուած է ճուռումուռ շատ նեղ անցք մը, ուրկէ միայն օդն ու ջուրը կրնան անցնիլ: Մեր հզօր արքան³ քառասուն օր ժամանակ կու տայ ձեզի, որ պէսզի դուք՝ խելքով հռչակուած հայերդ, այս մետաքսէ բարակ թելը անցընէք այդ ճուռումուռ անցքէն եւ փայտը դրկէք իրեն: Եթէ չկարենաք, մեր զօրքերը քարուքանդ պիտի ընեն ձեր երկիրը:

Սուրհանդակը մեկնեցաւ:

Հայոց թագաւորը ծանր մտածումի մէջ ինկաւ: Խաղաղասէր ու շինարար թագաւոր էր: Կը սիրէր խաղաղ աշխատանքը, կը կառուցանէր քաղաքներ, ջրանցքներ, կամուրջներ, տուներ, որ ժողովուրդը երջանիկ ապրէր: Չէր սիրէր պատերազմիլ: Հայոց թագաւորը կանչեց իր պալատականները եւ պատուիրեց որ կատարեն չար թագաւորին կամքը:

Շատ փորձեցին անոնք, շատ մտածեցին, բայց չկրցան մետաքսէ բարակ թելը անցընել այդ ճուռումուռ անցքէն: Այն ատեն թագաւորը դիմեց ժողովուրդին.

— Հայ ժողովուրդ,— ըսաւ ան,— քու փրկութիւնդ այս բարակ թելէն կախուած է: Հազար ոսկի կը խոստանամ այն մարդուն, որ մեր երկիրը ազատէ չար թշնամիէն:

Օրեր կ'անցնէին, բայց ոչ ոք պալատ կու գար: Տակաւին ոչ մէկը գտած էր թելը անցընելու հնարը: Թագաւորը գլուխը ափերուն մէջ առած՝ գիշեր-ցերեկ կը մտածէր, բայց հնար չէր գտներ:

Հասաւ վերջին օրը...

Բ

Քաղաքին հեռաւոր ծայրերէն մէկուն մէջ մութ ու խոնաւ խրճիթ մը կար: Հոն կ'ապրէր կոյր եւ աղքատ ծերունի մը իր թոռնիկին հետ: Ծերունին ալ կը խորհէր այդ հանելուկը լուծելու մասին, բայց անօգուտ:

Թոռնիկին աչքերը յանկարծ փայլեցան ուրախութենէն:

— Պալատին մէջ մրջին չկայ, մեծ հայրիկ,— հարցուց տղան: Թող այդ թելը կապեն ոտքին եւ մրջինը ձգեն անցքին մէջ. ան մէկ ծայրէն կը մտնէ, միւսէն կ'ելլէ:

Այս լսելուն պէս ծերունին ցատկեց տեղէն, գրկեց թոռնիկը եւ սկսաւ համբուրել անոր ճակատը, այտերը:

— Ապրիս, իմ հնարագէտ թոռնիկս, հնարը գտար,— բացա-



¹ **հնարագէտ** - հնարամիտ՝ խելացի հնարներ՝ միջոցներ մտածող
² **սուրհանդակ** - յափուկ պաշտօնեայ, որուն միջոցով հին արեւն պերական գրութիւններ կը դրկէին
³ **արքայ** - թագաւոր

գանչեց ծերունին: — Օ՛ն, շնու ըրէ, վազենք թագաւորին քով:

Պահակները, սակայն, արգիլեցին ներս մտնել:

— Ո՛վ խեղճուկրակ⁴ մարդ,— ըսին ծերունիին,— հարիւրաւոր գիտուններ բաց-բաց աչքերով խորհեցան, բայց չկրցան կատարել թագաւորին պահանջը: Դուն այդ կոյր աչքերովդ ի՞նչ պիտի կրնաս ընել:

— Ես կոյր չեմ,— խօսեցաւ ծերունին,— ես ամէն բան կը տեսնեմ իմ թռնիկին աչքերով: Հրաման տուէք որ թագաւորին քով երթանք:

Ծերունիին համարձակ պատասխանէն գոհ՝ պահակները զինք տարին թագաւորին քով:

Գ

Թագաւորը գլուխը բարձրացուց եւ յուսահատ նայեցաւ կոյր ծերունիին եւ անոր թռնիկին:

Ծերունին մինչեւ գետին խոնարհելով՝ ըսաւ.

— Թագաւորը թող երկար ապրի, թռնիկս գտած է մեր ժողովուրդը փրկելու հնարը: Կը խնդրեմ, հրաման տուէք որ կատարէ ձեր պահանջը:

— Ահա՛ փայտը, աս ալ՝ թելը. փորձէ՛ տեսնեմ, զաւակս:

Երբ տղան իր մրջիւնին օգնութեամբ վայրկեանի մը մէջ կատարեց թագաւորին պահանջը, պալատականները զարմանքէն ապուշ կտրեցան, իսկ թագաւորը յուզումէն դողողալով բացազանչեց.

— Կեցցես, հնարագէտ մանչուկս, դուն փրկեցիր քու հայրենիքը: Հէյ, գանձապահ, շնու, խոստումս կատարէ:

Երբ ոսկիի պարկը դրին տղուն առջեւ, պալատականները սկսան նախանձով նայիլ անոր եւ պարկին:

Անոնք ալ աւելի ապշեցան, երբ աղքատ ու կոյր ծերունին ըսաւ իր թռնիկին.

— Չաւակս, համրէ՛ ու միայն հարիւր ոսկի առ: Այդքանը լիովի կը բաւէ մեզի: Մնացած ինը հարիւր ոսկին թող մնայ թագաւորական գանձարանին մէջ. մեր տէրութիւնը պէտք կ'ունենայ անոր:

Ծերունիին այդ խօսքերուն վրայ թագաւորը ոտքի ելաւ, յարգանքով թօթուեց անոր ձեռքը, շոյեց ու համբուրեց հնարագէտ տղուն ճակատը:

Հարցումներ եւ հրահանգներ

1. Թշնամին ինչ պահանջ դրաւ շինարար հայ ժողովուրդին առջեւ:
2. Ինչ մեծ զգացում էր, որ պզտիկ տղան մղեց հնարագիտութեան:
3. Ինչ ցոյց կու տան ծերունիին վերջին խօսքերը:
4. Դուք որեւէ հնարագիտութիւն ըրած կամ լսած էք. պատմեցէք:
5. Դասին մէջէն գտէք բարդ եւ ածանցաւոր բառերը, գրեցէք առանձին սինակներու մէջ եւ կորերով ցոյց տուէք անոնց բաղադրիչ մասերը:

հնար
հնարագէտ
հնարագիտութիւն

⁴ խեղճուկրակ - թշուառ՝ ողորմելի



ԲՈՒՍԱԿԱՆ ԵՒ
ԿԵՆԴՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ԳՈՎՔ¹ ԿԱՆԱԶԻՆ



Սիրէ պարտէզ, այգի, անտառ.
 Օգուտ կու տայ ամէն մէկ ծառ:
 Ծառը կու տայ գեղեցկութիւն,
 Կը զարդարէ թէ բակ, թէ տուն:
 Զով-հով կու տայ ան ամէնուն՝
 Ամրան այրող տաք օրերուն:
 Ծառը բարիք է մշտապէս,
 Կը կերակրէ թէ զիս, թէ քեզ:
 Ան կը դառնայ տախտակ, գերան²,
 Որ դուռ շինես ու նստարան:
 Թուղթ կը դառնայ, դուն չմոռնանս,
 Որ գիրք տպեն, եւ դուն կարդաս:
 Օգնէ, որ մայր հողը ծաղկի,
 Շիւ մը տնկէ, թող բողբոջի:
 Թող կանաչնայ Երկիրն Հայոց,
 Դառնայ շքեղ, մեծ ծաղկանոց:

գովել
 գովք
 գովասանք

¹ գովք — գովասանք՝
 գովելու խօսք
² գերան — ճիւղերէն
 մաքրուած մեծ ծառի
 կտրուած բուն

Հարցումներ եւ հրահանգներ

1. Գրողը ինչ խրատներ կու տայ մեզի եւ ինչ բանի գովքը կ'ընէ. ինչո՞ւ:



1. Ոտանաւորին մէջէն գտէք **ածանցաւոր բառերը**. դուք ալ ըսէք այդ ածանցներն ունեցող երկութեան բառ:

2. Ընթորինակեցէք **հետեւեալ բառերը՝ կէտերուն տեղ գրելով ք կամ փ**.

աղ.անոց, փր.ուր, աղ.իւր, կո.ել, փող.ողիլ, նուր., հար.իլ, ող.ալ, եղ.այր, ծե.ել, շա.աթ, Ար.ի, Հոկտեմ.եր, խա.ե-բայ, Համ.արծում, եր.ներանգ, ձեր.ակալել, դար.նոց, փր.րիլ, եր.եմն, բող.ոջիլ, հար.ուխ, սր.ել:

ԻՆՉՈՒՒ ՀԱՄԱՐ ԵՆ ԾԱՂԻԿՆԵՐՈՒՆ ԳՈՅՆԵՐԸ

Տարուան չորս եղանակները կը յաջորդեն իրարու, եւ մենք անհամբերութեամբ կը սպասենք անոնց: Ամէն մէկ եղանակ ունի իր գեղեցկութիւնը եւ օգտակարութիւնը:

Ահա ամառը: Ծառերու տերեւներուն մէջէն կը փայլփլին հիւթալի պտուղները: Թռչունները կը թռչտին մէկ ծառէն միւսը եւ անուշ-անուշ կը ճուռողեն:

Օ՛, ինչ գեղեցիկ է. ծաղիկներու հանդէս ըլլայ կարծես: Անոնց մէջ մէկը կարմիր է, միւսը՝ կապոյտ, երրորդը՝ դեղին, չորրորդը՝ ձիւնի պէս ճերմակ: Ո՛ր մէկը թուես...

Եւ այս բոլոր ծաղիկները կը կանչեն մեղունները, որ գան եւ իրենց բաժակներուն հիւթը ծծեն: Մեղունները, հիացած ծաղիկներուն գոյներուն վրայ, կը թռչին ու կու գան դեպի ծաղիկները:

Գիտէ՞ք թէ ինչ կ'ըլլար, եթէ ծաղիկները գեղեցիկ գոյներ չունենային. մեղունները եւ ուրիշ միջատներ չէին մօտենար ծաղիկներուն: Եւ այն ատեն միջատները ծաղիկներու փոշին չէին տաներ մէկ ծաղիկէն միւսը, ծաղիկները կ'ոչնչանային եւ այլեւս հունտ չէին տար:



հիւթ
հիւթալի
հիւթել

Հարցումներ եւ հրահանգներ

1. Պատմեցէ՛ք՝ ինչնի համար են ծաղիկներուն գոյները:
2. Յիշեցէ՛ք՝ ծաղիկները ինչ օգուտներ կու տան մեզի:



Սորվինք **գ**-ով գրուող բառերուն ուղղագրութիւնը.

կարագ, ճրագ, ուրագ, արագ, ձագ, սագ, թագ, հագուստ, օգուտ, օգնել, յոգնիլ, առոյգ, գոգնոց, գոյգ, հոգ, շոգի, բացագանչել, զոյգ, մարգագետին, գայլ, գանգատ, գանգուր, գգուել (շոյել)...

ԿԵՌԱՍԻԿԸ

Փոքրիկ կեռասիկը կը բնակէր կեռասենիի ճիւղին վրայ: Ան ծնած էր իր քրոջը հետ: Անոնք երկար ատեն քնացած էին իրենց օրօրոցներուն մէջ:

Առտու մը մէկը զարկաւ պատուհանը:

— Ո՞վ է,— հարցուց կեռասիկը՝ սաստիկ վախցած:

— Ես եմ՝ հովիկը,— պատասխանեց անձանօթ ձայն մը:— Ինչո՞ւ փակուած էք ձեր սենեակներուն մէջ: Ամէն մարդ մեծ պատրաստութիւն կը տեսնէ: Գարունը պիտի գայ շուտով:

— Մենք ի՞նչ կրնանք ընել,— դեռ շատ պզտիկ ենք:

Այն ատեն մայր կեռասենին ըսաւ.

— Իմ պզտիկ, սիրուն կեռասիկներս, դուք ամբողջ ձմեռը քնացած էիք ձեր օրօրոցներուն մէջ: Խնամքով ծածկեցի ձեզ, որ չմսիք: Իմ հիւթովս կերակրեցի ձեզ: Հիմա ժամանակն է որ դուրս ելլէք ձեր սենեակներէն՝ դիմաւորելու գարունը: Վարպետ դերձակուի Մարտը արդէն ճերմակ հագուստներ կարած է ձեզի համար:

Կեռասիկները շատ ուրախացան: Անմիջապէս հագան իրենց գեղեցիկ հագուստները եւ տերեւներուն մէջէն դուրս հանեցին իրենց գլխիկները:

— Օ՛հ, ի՞նչ լաւ է, ի՞նչ հրաշալի է գարունը,— հիացած բացազանջեցին անոնք:

Յանկարծ ձայն մը լսուեցաւ.

— Պըճճ, բարի լո՛յս, գեղեցիկ կեռասիկ:

— Ներողութիւն, ո՞վ ես դուն,— հարցուց կեռասիկը:

— Ես մեր փեթակին ամէնէն ժիր մեղուն եմ: Ատոր համար ալ ժիրիկ կը կոչեն զիս: Կ'ուզես որ բարեկամներ ըլլանք:

Կեռասիկը սիրեց աշխատասէր մեղուն եւ ծաղկափոշի հրամցուց անոր: Ժիրիկը աղէկ մը կշտացաւ, շնորհակալութիւն յայտնեց ու թռաւ գնաց:

Եւ այդպէս՝ բազմաթիւ մեղուններ, բզէզներ, գոյնզգոյն թիթեռնիկներ այցելեցին կեռասիկին:

Կեռասիկը եւ իր քոյրիկը օրէ օր կը մեծնային: Ճերմակ հագուստը ալ նեղ կու գար անոնց հաստիկ մարմիններուն: Անոնք կամացուկ մը հանեցին հագուստները եւ յանձնեցին բարի հովիկին, որ պահէ զանոնք:

Կարծ ժամանակ մը ետք անոնք դարձան կլոր այտերով սիրուն կեռասիկներ: Առտու մըն ալ արեւը համբուրեց անոնց զոյգ այտերը:

Կեռասիկները սկսան կարմրիլ: Բարի արեւը ամէն օր կը համբուրէր զանոնք: Եւ կեռասիկները հետզհետէ աւելի կը մեծանային, աւելի կը կարմրէին:

Կեռաս
կեռասենի
կեռասիկ



Հարցումներ և հրահանգներ

1. Դերերով կարդացէ՛ք այս հեքիաթը:
2. Գրողը ի՞նչ կը սովորեցնէ մեզի այս հեքիաթին միջոցով:
3. Կեռասենիին ծաղկիլը եւ կեռասներուն հասուննալը ի՞նչ պատկերներով տրուած են. կարդացէ՛ք այդ տողերը:
4. Յիշեցէ՛ք՝ ի՞նչ բաներու շնորհիւ կ'աճին պտուղները:



1. Սորվի՛նք **p**-ով գրուող բառերուն ուղղագրութիւնը.

ա) **տաք, քաղաք, ցամաք, փափաք, սլաք, թոք, բողոք, շուք, բութ, արքայ, մաքուր, քրտնիլ, քաղել, քաղցր, քանակ, քայլ, քառասուն, քեռի, քեռայր, քննել:**

բ) Դասին մէջէն ալ գտէ՛ք եւ առանձին խումբերով գրեցէ՛ք **գ**-ի եւ **ք**-ի ուղղագրութեան պատկանող բառերը:

2. Գտէ՛ք դասին **բառակապակցութիւնները** եւ անոնցմէ հինգը գործածեցէ՛ք նախադասութիւններու մէջ (15 բառակապակցութիւն կրնաք գտնել):

Վ. Գրիգորեան

ԿԱՅԾՈՒԻԿ

(Հեքիաթ)

Անտառին մէջ, թուփի մը տակ կ'ապրէր պզտիկ միջատ մը: Անտառին եզերքը կը նստէր միշտ եւ անցորդներուն բարեւ կու տար: Բայց ոչ ոք կը տեսնէր զինք: Ան շատ պզտիկ էր:

Օր մը արեւին շողը տեսաւ որ միջատը կու լար:

— Ինչո՞ւ կու լաս,— հարցուց ան:

— Որովհետեւ շատ պզտիկ եմ, եւ ոչ մէկը կը նկատէ զիս,— ըսաւ միջատը:

Արեւին շողը շատ սիրեց միջատին պատասխանը: Մայր մտնելէ առաջ՝ իր լոյսէն կայծ¹ մը նուիրեց անոր եւ ըսաւ.

— Ա՛ռ այս կայծը որ մարդիկ տեսնեն քեզ: Այս կայծով լուսաւորէ անտառին ճամբան: Թող անցորդները չկորսուին:

Այդ օրուրնէ մարդիկ միջատը անուանեցին **կայծոռիկ**: Հիմա ան շատ երջանիկ է: Արդէն բոլորը կը տեսնեն զինք եւ անոր լոյսով կը գտնեն իրենց ճամբան:



Կազմեցէ՛ք նոր բառակապակցութիւններ՝ ընդգծուած բառերուն հոմանիշները գրելով.

ա) **պզտիկ միջատ, սպիտակ հագուստ, մեծ կեռասիկ, երջանիկ մարդ, մաքուր ջուր, ջանասէր մեղու, արի զինուոր, անսիրտ թագաւոր, յանդուգն տղայ, խեղճուկրակ մարդ:**

բ) Նոր կազմուած բառակապակցութիւններէն հինգը գործածեցէ՛ք նախադասութիւններու մէջ:

¹ կայծ - արեւի շողի փայլ-փլուղ փոքրիկ մաս

ՏԱՆՁԵՆԻՒՆ ՎՐԱՅ



միրգ մրգաստան

Ամառ էր: Լոռիի մրգաստաններուն մէջ հասած էին պտուղները: Անոնք այնքան շատ էին, որ ձիւղերը վար կախուած էին անոնց ծանրութենէն:

Օր մը եղբայրս, գիրք կարդալէ յոգնած, կ'ուզէ հանգստանալ: Իրիկուան դէմ կ'երթայ մեր մրգաստանը, որ կը գտնուի մօտակայ անտառին քով: Օրուան այդ պահուն անտառը զով էր, հաճելի: Ծառերուն տերեւները կ'օրորուէին մեղմ հովէն:

Եղբայրս ամէնէն շատ տանձ կը սիրէր: Մեր մրգաստանին մէջ տանձենի մը կար, որուն բունը¹ ծռած էր: Ատոր համար ալ ծառին վրայ ելլելը շատ դիւրին էր: Խոշոր տանձերը կը փայլէին ձիւղերուն մէջէն: Եղբայրս ծառ կ'ելլէ ու կը սկսի ուտել հասած տանձերը:

Յանկարծ թուփերուն մէջէն խշրտոց մը կը լսուի: Եղբայրս ծառին վրայէն կը տեսնէ որ հսկայ արջ մը կը մտնէ մրգաստան ու կը մօտենայ տանձենիին: Արջը կը սկսի ծառ բարձրանալ: Եղբայրս կը սպասէ ձիւղերուն մէջ կծկուած: Արջը թաթը կ'երկնցնէ ու կը քաղէ խոշոր տանձ մը, յետոյ՝ ուրիշ մը: Եղբայրս կը մտածէ որ արջը հիմա պիտի կշտանայ ու վար իջնէ: Բայց արջը կշտանալու միտք չունէր: Ան ուտելով կամաց-կամաց աւելի վեր կ'ելլէր: Եղբայրս աւելի կը կծկուի եւ կը սպասէ շունչը բռնած, որ արջը չիմանայ թէ մարդ կայ ծառին վրայ:

Ահա արջը կը մօտենայ: Եղբայրս կը սկսի դողալ ու կը վախնայ, որ ծառէն վար իյնայ:

Յանկարծ եղբայրս կը յիշէ քեռիիս խօսքերը, որ արջը բարձրը ձայնէ կը շփոթի ու կը փախչի: Եւ ան կը ծռի ու բարձր ձայնով կը պոռայ արջի ականջին:

Արջը շփոթմունքէն վար կ'իյնայ ու գլորելով կը փախչի մըրգաստանէն:

¹ բունը — ծառին՝ գեղնէն վեր՝ մինչեւ ձիւղերը եղած մասը

? Հարցումներ եւ հրահանգներ

1. Ինչ սորվեցաք եւ ուրիշ ինչ գիտեք արջի մասին:
2. Այս դէպքը պատմեցէք այնպէս, որ կարծես ձեզի հետ պատահած է. սկսեցէք այսպէս՝ *Օր մը, գիրք կարդալէ յոգնած, ես ուզեցի...*

1. Դասին մէջէն գտէք **այ**-ով վերջացող բառերը. ընդօրինակեցէք եւ բացատրեցէք ուղղագրութիւնը:
2. Ընդօրինակեցէք հետեւեալ բառերը՝ կէտերուն տեղ գրելով **գ** կամ **ք** գիրը.
հա.ուստ, շո.ի, կարա., օ.նական, աղ.ատ, թա.աւոր, շո.ենաւ, ցամա., ձա.ուկ, շ.եղ, սլա., բու., սա., փափա.իլ, օ.տակար, յո.նութիւն, թո., շու., զոյ., ար.այ, առոյ., յար.ել, հա.նիլ, յո.նիլ, փափա.իլ, մտահո.ուիլ, թա.ուիի, փո.րիկ:

ԳԱՌՆՈՒԿՍ

Ճերմակ գառնուկս իմ սիրուն,
Ցատկէ՛, եկրոր քովս ի վեր՝
Ձով շուքին տակ ծառերուն,
Ուր կը փչեն մեղմ հովեր:

Քեզի համար լեռ-ձորէն
Քաղէմ տերեւ ու ծաղիկ,
Արտէն բերեմ շատ ցորեն,
Տունէն՝ շաքար ու հատիկ:

Դաշտին կանաչ խոտերը
Քեզի բազմոց թող ըլլան,
Լիճին պաղուկ ջուրերը
Տոտիկներդ թող լուան:

Ծունկս ըլլայ անկողին,
Կուրծքս՝ բարձ, թեւս՝ վերմակ,
Չղպչի պոչդ հողին,
Չաղտոտի բուրդդ ճերմակ:

Չարցումներ եւ հրահանգներ

1. Պզտիկ տղան ինչպէ՛ս կ'արտայայտէ իր սէրը գառնուկին հանդէպ. պատմեցէ՛ք:
2. Դուք ի՞նչ կենդանիներ կը սիրէք:
3. Կենդանիները ի՞նչ օգուտներ կու տան մեզի:



1. Ընդօրինակեցէ՛ք եւ ընդգծեցէ՛ք **աձանցները** հետեւեալ բառերուն.

պաղուկ, գառնուկ, գիտուն, սիրուն, կեղտոտ, աղտոտ, հատիկ, տոտիկ, բազմոց, հայերէն, հայկական, հայութիւն, Հայաստան:

2. Ոտանաւորին մէջէն գտէ՛ք **բ-փ-ի** ուղղագրութեան պատկանող բառերը եւ զանոնք գործածեցէ՛ք նախադասութիւններու մէջ:

**բուրդ
բուրդէ
բրդոտ
բրդեղէն**



ԱՌԻՒԾՆ ՈՒ ՇՆԻԿԸ

Ա

Լոնտոնի կենդանաբանական պարտէզին կենդանիները տեսելու համար դրամի փոխարէն երբեմն շուն կամ կատու կ'ուզէին, որ կերակրեն գազանները:

Օր մը գազանները տեսնելու համար շնիկ մը բերին: Շնիկը նետեցին առիծին վանդակը, որ ուտէ: Շնիկը պոչը քաշեց եւ կծկուեցաւ վանդակին մէկ անկիւնը: Առիծը մօտեցաւ եւ հոտոտեց զայն: Շնիկը պառկեցաւ կոնակին վրայ: Բարձրացուց թաթիկները եւ սկսաւ պոչը շարժել: Առիծը իր թաթով դարձուց շնիկը: Ան վեր թռաւ եւ իր ետեւի ոտքերուն վրայ կեցաւ առիծին առջեւ: Առիծը կը նայէր շնիկին: Գլուխը այս ու այն կողմ կը դարձնէր, բայց չէր դպչեր անոր:

Պաշտօնեան միս տուաւ առիծին: Առիծը կերաւ կտոր մը, քիչ մըն ալ թողուց շնիկին:

Իրիկունը առիծը պառկեցաւ, որ քնանայ: Շնիկն ալ պառկեցաւ եւ իր գլուխը դրաւ առիծին թաթերուն վրայ:

Բ

Առիծը եւ շնիկը այսպէս ապրեցան տարի մը: Առիծը չէր վնասեր շնիկին: Իր կերէն բաժին կը հանէր եւ կը խաղար շնիկին հետ:

Տարի մը ետք շունը հիւանդացաւ ու սատկեցաւ: Առիծը նորէն չկերաւ շնիկը: Կը հոտոտէր, կը լզէր զայն ու թաթով կը շոյէր: Երբ ան հասկցաւ որ շնիկը սատկած է, յանկարծ թռաւ տեղէն ու մոնչեց¹: Սկսաւ պոչով զարնել վանդակին պատերուն, կրծել յատակը: Յետոյ պառկեցաւ շնիկին քով ու լռեց:

Տէրը կ'ուզէր վանդակէն դուրս հանել սատկած շնիկը: Բայց առիծը չէր թողուր որ մէկը մօտենար: Տէրը կը կարծէր թէ առիծը կը մոռնայ այս շնիկը, եթէ անոր ուրիշ շնիկ մը տայ ուտելու: Եւ ուրիշ շնիկ մը նետեց վանդակը: Առիծը իսկոյն պատառ-պատառ ըրաւ այդ շնիկը, բայց չկերաւ: Յետոյ իր թաթերով գրկեց մեռած շնիկը եւ այդպէս պառկեցաւ հինգ օր՝ առանց բան մը ուտելու:

Վեցերորդ օրը առիծը սատկեցաւ:

ԿԵՆՊԱՆԻ ԿԵՆՊԱՆԱԲԱՆԱԿԿԱՆ

¹ մոնչեց — ուժգին ձայնով գոչեց (առիծի մասին)

Հարցումներ եւ հրահանգներ

1. Առիծը ինչո՞ւ չկերաւ շնիկը:
2. Շնիկին սատկիլը ի՞նչ ազդեցութիւն ունեցաւ առիծին վրայ:
3. Ի՞նչ սորվեցաք այս պատմութենէն:
4. Պատմութեան երկու մասերուն վերնագիրներ դրէք:

Առանձին սիւնակներու մէջ ընդօրինակեցէ՛ք **գ-ի** եւ **ք-ի** ուղղագրութեան պատկանող բառերը՝ կէտերու փոխարէն դնելով անհրաժեշտ գիրը.

արա., կարա., ցամա., քաղա., ծա., տա., թա., շու., ճրա., թո., արձագան., վտան., իչ, .ար, .աջ, ա.լոր, միր., ար.այ, .աղբր, .րիչ, .ահանայ, .աղել, արա.իլ, .աւագան, թանա., .արոզ, հին., .լուխ, .ազան, .եղեցիկ:

ՃԱՅԵՐԸ¹

Դելփիններուն պէս ճայերն ալ չեն բաժնուիր նաւերէն: Միշտ անոնց շուրջը կը դառնան: Կը սիրեն մարդիկը ու չեն փախչիր անոնցմէ:

Ձմեռ էր: Նաւուն վրայ աշխատող մարդիկ արդէն մտած էին իրենց պզտիկ սենեակները: Վերը մնացած էին նաւապետը եւ քանի մը աշխատողներ: Թեթեւ ալիքէն նաւը կ'օրօրուէր: Ճայերը կը թռչէին նաւուն առջեւէն ու կարծես ճամբայ կը ցուցնէին:

Յանկարծ անոնք սկսան իրար անցնիլ: Խումբով կը դառնային նաւուն շուրջը: Կ'իջնէին ջուրին վրայ: Պահ մը կը կորսուէին ու նորէն վեր կ'ելլէին: Կը ճչային, կը կանչէին:

Նաւապետը առաջ ուշադրութիւն չդարձուց անոնց: Կը նայէր նաւուն կողմնացոյցին: Սակայն ճայերը նաւուն շուրջը այնքան պտըտեցան, որ նաւապետը սկսաւ մտահոգուիլ: Ըսել է թէ՛ բան մը պատահած էր: Կանչեց աշխատողներէն մէկը եւ ըսաւ որ ուշադրութեամբ դիտէ նաւուն չորս կողմը:

Ատեն մը ետք յանկարծ ձայն մը լսուեցաւ.



— Նաւուն աջ կողմը՝ բաց ծովուն մէջ, մարդ մը կ'երեւի:

Նաւապետը իրար անցաւ: Ամէնքը դուրս թափեցան իրենց սենեակներէն:

Շուտով երեւցաւ լողացող մարդը: Անոր սառած ու յոգնած թւերը հազիւ կը շարժէին: Թրջուած հագուստը վար կը քաշէր զինք:

Նաւուն վրայէն նետեցին ազատարար գօտի² մը: Բայց մարդը չկրցաւ բռնել զայն: Նետեցին երկրորդը, երրորդը: Վերջապէս մարդը յաջողեցաւ բռնել անոնցմէ մէկը: Քիչ ետք մարդը նաւուն մէջ էր արդէն:

Եւ այսպէս՝ ճայերը փրկեցին մարդուն կեանքը:



**ազատ
ազատիլ
ազատարար**

Չարցումներ եւ հրահանգներ

1. Ճայերը ինչպէ՞ս փրկեցին խելդուող մարդը:
2. Ուրիշ ի՞նչ պատմութիւններ գիտէք մարդոց կեանքը փրկող կենդանիներուն մասին:
3. Սորվեցէ՞ք տրուած ծովային կենդանիներուն անունները. փորձեցէ՞ք նկարել անոնցմէ մէկը:

¹ Ճայ — արագիլի նմանող ձկնասէր թռչուն մը, որ լիճերու եւ ծովերու վրայ կ'ապրի
² ազատարար գօտի — մարդը ջուրին երեսը պահող օղով լեցուն շրջանակ



1. Սորվինք դ-ով գրուող բառերուն ուղղագրութիւնը.

մարդ, վարդ, զարդ, որդի, բուրդ, որսորդ, ժողովուրդ, սարդ, բարդ, կենդանի, յորդ, բերդ, երդում, անդամ, խնդիր, ընդունիլ, վանդակ, խնդրել, որդ, հրդեհ:

2. Կազմութեամբ ինչպիսի՞ բառեր են՝ նաւապետ, կողմնացոյց, ուշադիր, մտահոգ բառերը. բացատրեցէ՞ք իմաստները եւ անոնցմէ երկուքը գործածեցէ՞ք նախադասութիւններու մէջ:

Ծովային կենդանիներ



կէտ



փոկ



դելփին



կրիայ



խխունջ



խեցգետին



շնաձուկ



ձուկ



ոստրէ

ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ՀՐԴԵՆ ԱՉԱՏՈՂ ՇՈՒՆԸ

Շատ կը պատահի որ հրդեհի ատեն այրող տուներուն մէջ երախաներ կը մնան: Անոնք մուխին մէջ չեն երեւիր: Յաճախ¹ ալ վախէն կը պահուրտին եւ ձայն չեն հաներ: Զանոնք փրկելու համար վարժեցուած շուներ կան: Երբ որեւէ տունի մէջ հրդեհ կ'ըլլայ, հրշէջները² զանոնք կը դրկեն՝ մանուկները փրկելու համար:

Լոնտոնի մէջ այդպիսի շուն մը ազատած է տասներկու մանուկ: Այդ շունին անունը Պոպ էր:

Օր մը տուն մը կ'այրէր: Երբ հրշէջները եկան, կին մը վազեց անոնց քով: Լալով ըսաւ որ հինգ տարեկան աղջիկը ներսը մնացած է: Հրշէջները դրկեցին Պոպը: Շունը սանդուղէն վեր վազեց եւ ներս մտաւ: Քանի մը վայրկեան ետք ան դուրս թռաւ տունէն՝ ակռաներով մանկիկին հագուստէն բռնած:

Աղջիկը ողջ էր: Մայրը գրկեց իր զաւակը եւ ուրախութենէն սկսաւ լալ:

Հրշէջները կը շոյէին շունը: Կը նայէին թէ անոր որեւէ տեղը այրած է: Սակայն Պոպը փախաւ անոնց ձեռքէն ու նորէն տուն վազեց: Շուտով դուրս եկաւ՝ ակռաներով բան մը բռնած: Երբ մարդիկ տեսան, խնդալէն մարեցան. շունը ներսէն պուպրիկ մը բերած էր:

Չարցումներ եւ հրահանգներ

1. Պոպը ինչպէ՞ս հրդեհէն ազատեց փոքրիկ մանուկը. պատմեցէ՞ք այս պատմութիւնը:
2. Ուրիշ ինչ բաներու մէջ շունը կ'օգնէ մարդոց:
3. Դուք շուն կը սիրէ՞ք ու կը պահէ՞ք. ինչո՞ւ:

1. Սորվինք **թ**-ով գրուող բառերուն ուղղագրութիւնը.
զուարթ, թերթ, մորթ, արթուն, կիրթ, խորթ, շողոքորթ, մորթել, շրթունք, հորթ (կովու ձագ), կարթ, հարթ, յաղթել, մաղթել, թուղթ, թերթել, արթուն, փարթամ...

2. Հետեւեալ բառակապակցութիւնները ըսէ՞ք **ածանցաւոր** բառերով.
զգոյշ չեղող, վնաս չտուող, օգուտ չտուող, կիրթ չեղող, վախ չունեցող, գոհ չեղող, բախտավոր չեղող, գեղեցիկ չեղող:
Օրինակ՝ զգոյշ չեղող — անզգոյշ:

պահուրտիլ պահուրտուք

¹ յաճախ — շատ անգամ
² հրշէջ — հրդեհ մարելու պաշտօն ունեցող մարդ

ՀԱՆԵԼՈՒԿ

Հաւատարիմ է
 Միշտ իր տիրոջը,
 Երբոր զինք տեսնէ,
 Կը շարժէ պոչը:

ՊԱՐԿԵՐԷ՛¹

Կ'ուզէս տեսնել պարկերէ.
Անասնանոց² դուն վազէ:

Զարմանալի կենդանի.
Փորին տոպրակ մը ունի:

Զագը կ'ապրի անոր մէջ,
Մօր հետ կը շրջի անվերջ:

Երբ փոքր է եւ անօթի,
Իր տոպրակէն կը սնանի:

Բայց երբ ան մեծ է արդէն,
Դուրս կը ցատկէ տոպրակէն:

Իսկ երբ զգայ վտանգը,
Շուտ կը մտնէ իր պարկը:

Երէ պարկերէ

Հարցումներ եւ հրահանգներ

1. Դուք տեսա՞ծ էք պարկերէ. եթէ ոչ՝ անպայման այցելեցէ՞ք կենդանաբանական պարտէզ:
2. Պատմեցէ՞ք այս ոտանաւորին բովանդակութիւնը:



¹ պարկերէ — խոտակեր կենդանի, որ փորին պարկ՝ տոպրակ ունի

² անասնանոց — հոս՝ կենդանաբանական Պարտէզ

1. Ընդօրինակեցէ՞ք հետեւեալ բառերը՝ կէտերուն տեղ գրելով **դ կամ թ** գիրը.

խն.րել, զուար., կր.ութիւն, որ.ի, զար., մոր., ան.ամ, վար., որսոր., շր.ունք, հոր. (կովու ծագ), խոր., ժողովուր., յոր., թեր., մար., բար., ար.ննալ, բուր., մեր., ար.ուկ, մաղ.ել, կեն.անի, եր.ում, յաղ.ել:

2. Հետեւեալ ածանցաւոր բառերուն իմաստները ըսէ՞ք բառակապակցութիւններով.

տնակ, գետակ, նոնենի, փշոտ, անտուն, անտէր, ծաղկանոց, յանցաւոր, խելացի, սրճարան:

Օրինակ՝ փշոտ — փուշ ունեցող:

ՓԻՂԵՐԸ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՆ

Օր մը ոստիկան մը եկաւ կրկէս ու խնդրեց որ զինք տանին փիղ վարժեցնող մարդուն քով: Փորձը վերջացած էր, բայց վարժեցնողը եւ փիղը սրահն էին տակաւին: Փորձը յաջող անցած էր: Փիղը քանի մը անգամ կատարած էր իր վարժութիւնը՝ առանց ստիպելու: Ատոր համար տէրը ուրախ էր:

Յանկարծ ձայն մը լսուեցաւ ետեւէն.

— Բարեւ ձեզ:

Վարժեցնողը զարմացաւ՝ կրկէսին մէջ ոստիկան տեսնելով:

— Դուք դրամ պէտք է տաք որպէս պատիժ,— ըսաւ ոստիկանը:

— Ինչո՞ւ, ի՞նչ պատահած է:

— Ձեր փիղը այս առտու կերած է ծաղկանոցին ծաղիկները, կոխկռտած է խոտերը:

— Այդպիսի բան մը չէ եղած, ես չեմ տեսած,— պատասխանեց փիղ վարժեցնողը:

Բայց փիղը, ականջները տնկած, պոչը կախած, մեղաւորի պէս կեցած էր: Կարծես կ'ըսէր. «Ես յանցաւոր եմ, պատժէ՛ զիս»:

Ոստիկանը առաջին անգամ փիղ կը տեսնէր այսքան մօտէն:

— Կարելի է շոյել փիղը,— հարցուց ան:

— Կարելի է:

Ոստիկանը շոյեց փիղը, անոր պատիժը¹: Փիղը լռիկ-մնջիկ կեցած էր: Կարծես կը զգար որ բարի մարդ մըն էր ոստիկանը:

Փիղ վարժեցնողը կրկէս հրաւիրեց ոստիկանը, որ դիտէ փիղին վարժութիւնները: Փիղը ճարպիկ շարժումներ կ'ընէր: Ժողովուրդը հիացած կը ծափահարէր: Կը ծափահարէր նաեւ ոստիկանը: Ժողովուրդին մէջէն մէկը ծաղիկներով լեցուն սակառ մը դրաւ փիղին ոտքերուն առջեւ:

Այն ատեն զարմանալի բան մը կատարուեցաւ. փիղը իր պատիժով վերցուց սակառը. մօտեցաւ ոստիկանին եւ ծաղիկներով լեցուն սակառը տուաւ անոր:

Ժողովուրդը, որ շունչը պահած կը սպասէր, սկսաւ ուժեղ ծափահարել:



յիշել
յիշողութիւն
յիշատակ

¹ պատիժ — կնճիթ՝ փիղին քիթը

Հարցումներ եւ հրահանգներ

1. Ոստիկանը ինչո՞ւ եկած էր կրկէս:
2. Փիղը ինչո՞ւ ծաղիկները տուաւ ոստիկանին:
3. Փիղին վարմունքը ի՞նչ բանի օրինակ պէտք է ծառայէ ձեզի:
4. Պատմեցէ՛ք՝ փիղը ինչպիսի՞ կենդանի է:



Սորվինք *n-ով* և *p-ով* գրուող բառերուն ուղղագրութիւնը.

ա) *գառնուկ, բռնել, բեռնակիր, առնել, մոռնալ, դռնապան, որոնալ, լեռնական, դառնալ, սպառնալ, խառնել, մեռնիլ, նռնենի, եղեռն, ձեռնոց, կռնակ, պատռել, առաջ.*

բ) *երբ, պարտէզ, կարթ, արծիւ, որբ, խորթ, մարդ, վերջ, բերդ, յարդ, հարթ, արթուն, բուրդ, սուրբ, նուրբ, զարդ, վարդ, վարք, դարբին, արծան, յորդ, կրնալ, զարնել:*

ՀԱՆԵԼՈՒԿ

*Քիթը ոտքէն երկայն,
եւ ինք՝ քալող սար:*

Ռ. Նարիպեան

ԲՈԼՈՐՍ ՄԻԱՍԻՆ

— Ես բերք–բարիք կը ստեղծեմ,—
Ըսաւ արեւը վերէն:
— Ինչ սխալ բաներ կ’ըսես,—
Նեղուեցաւ ջուրը վարէն:
Առանց ջուրի՝ կեանք չկայ,
Ծաղիկ չկայ, խոտ չկայ:
— Ո՞վ է այդպէս խօսողը.—
Յանկարծ ըսաւ մայր հողը,—
Մի՛ պարծենաք¹ դուք այդպէս,
Ո՛չ դուն, ո՛չ ան, ո՛չ ալ ես.
Մենք բոլորս միասին
Միշտ կ’օգնենք մէկս միսին.
Մենք բոլորս կ’աշխատինք,
Որ ստեղծենք բերք–բարիք:

միանալ միասին

¹ մի՛ պարծենաք — մի՛ գոռոզանաք՝ ինքզինքնիդ մի՛ գովէք

Հարցումներ եւ հրահանգներ

1. Ինչ կ'ըսէին արեւն ու ջուրը:
2. Մայր հողը ինչ պատասխանեց անոնց:
3. Դուք որո՞նք ըսածը ճիշդ կը համարէք. ինչո՞ւ:
4. Ինչ կրնաք աւելցնել մայր հողին պատասխանին. որո՞նք աշխատանքը կը պակսէր անոր մէջ:
5. Բացատրեցէ՛ք տրուած ասացուածքներուն միտքը:



Ընթողինակեցէ՛ք հետեւեալ բառերը՝ կէտերուն տեղ գրելով յ կամ *n* գիրը.

կ.ունկ (թռչուն), ա.ատ (շատ), դա.նալ, դա.ծաւ, բու.դ, ա.ու, հե.անալ, գա.ուն, մա.դ, բա.ծր, գա.դարել, սա. (լեռ), կ.ունկ, սա., կ.նալ, պատ.ել, գա.նել, լե., լե.ան, ծմե., ծմ.ան, ծե.ք, ծե.բակալել, ամա., ամա.անոց, դու., դ.նապան, դ.ացի, բա.ծ, հա.թավայր, յո.դառատ, ս.բավայր, արդուզա.դ, ա.թննալ:

ԱՍԱՑՈՒԱԾՔ

- * Հողը կը կերակրէ մարդը,
Ինչպէս մայրը՝ իր զաւակը:
- * Երբ ձեռքդ հողին դպնայ,
Հողը ոսկի կը դառնայ:
- * Կ'առնէ բուռով, կու տայ բեռով,
Բայց ծոյլ մարդէն ան է քենով:

ՀԱՆԵԼՈՒԿ

Տաքէն թեւ առաւ, երկինք բարձրացաւ,
Դարձաւ անձրեւ, ձիւն, եր վերադարձաւ:

ՀՐԱԹԵՇՏ

Կռունկներուն երամն անցաւ,
Ճերմակ փետուր ինկաւ հողին.
Առուն լռեց ու համրացաւ¹,
Տերեւը լուռ ինկաւ հողին:

Գիշերն յուշիկ² եկաւ-անցաւ,
Արծաթ եղեամ³ իջաւ հողին,
Ծառը միրգեր թափեց հատ-հատ,
Առատ սեղան իջաւ հողին:

Քամին, ինչպէս բուրդ ու բամպակ,
Ամպը դիզեց⁴ սարի կողին,
Որ թէլ մանէ, հագուստ կարէ
Եւ հագցնէ յոգնած հողին:

Հողը գրկեց մնացողը
Ու ժպտեցաւ հեռացողին.
Աշնան երգն ալ թռաւ գնաց,
Գարնան երգը մնաց հողին:

Կռունկ կրունկ

¹ համրացաւ — լեզուն կապ-
ուեցաւ ու չկրցաւ խօսիլ.
համր դարձաւ
² յուշիկ — մեղմիկ, կամա-
յունկ
³ եղեամ — սառած ցօղ
⁴ դիզեց — կուտակեց՝ իրա-
րու վրայ հաւաքեց


Հարցումներ եւ հրահանգներ

1. Տարուան ձիւ եղանակը պատկերուած է բանաստեղծության մէջ:
2. Ինչո՞ւ բանաստեղծութիւնը «Հրաժեշտ» վերնագրուած է:
3. Բանաստեղծութեան ձիւ պատկերները աւելի շատ սիրեցի՞ք. կարդացէ՞ք:
4. Գոց սորվեցէ՞ք այս բանաստեղծութիւնը:
5. **Այս խումբին դասերէն ինչ նոր բաներ սորվեցաք բոյսե-րուն եւ կենդանիներուն մասին. գրեցէ՞ք, համեմատեցէ՞ք ձեր գրածները եւ որոշեցէ՞ք՝ ո՞վ ամէնէն շատ բան կրցած է նշել:**

1. Սորվինք ձ-ով գրուող բառերուն ուղղագրութիւնը.
ձեռք, արծակել, արծակուրդ, ընդարծակ, արծան, դարձնել, վերադարձ, բարձ, բարձր, բարձրանալ, բարձունք, վարձք, վարձել, վարձակալ, աշխատավարձ, խորձ, փորձ, փորձել, փորձանք, դեղձ, սանձ, օձ, օձիք, դեղձանիկ, Համբարձում:

2. Բառակապակցութիւններով ըսէ՞ք հետեւեալ բարդ բառերուն իմաստները.
վնասատու, բերքառատ, բերքատու, հիւանդապահ, անտառապահ, հօրեղբայր, դասընկեր, քաղցրաբոյր, ինքնաշարժ, արագավազ:

Օրինակ՝ քաղցրաբոյր — քաղցր բոյր ունեցող:



ՀԵՔԻԱԹՆԵՐ ԵՒ ԱՌԱԿՆԵՐ

ԱՌՈՆՑ ՀՐԱՄԱՆԻ

(Հեքիաթ)



Մրջիններուն թագաւորին ծննդեան տարեդարձն էր: Մեղուները իրենց թագուհիին հետ գացին զինք շնորհաւորելու:

Մրջիններուն թագաւորը մեծ սիրով ու պատիւով ընդունեց զանոնք: Հիւրասիրեց անուշեղէնով ու պտուղներով: Մեղուներու թագուհիին ալ արծաթէ գօտի մը եւ ոսկի սանտր մը նուիրեց:

Հիւրերը պատրաստուեցան երթալու: Մրջիններուն թագաւորը հրամայեց սակառները լեցնել համեղ պտուղներով եւ ճամբու դնել զանոնք:

Երբ մեղուները կ'անցնէին մրջիններուն այգիին մէջէն, խաղողի մէկական ողկոյզ փրցուցին: Այդ տեսնելով՝ մրջինները շատ բարկացան:


— Անմիջապէս տուէք խաղողին ողկոյզները եւ հեռացէք,— ըսին անոնք:

Մեղուները զարմացած հարցուցին.

— Դուք չէիք որ մեզ հիւրասիրեցիք, արժեքաւոր նուէրներ տուիք: Խաղողի մէկական ողկոյզը ինչ է որ կը բարկանաք:

— Ատոնք մենք նուիրեցինք ձեզի: Իսկ ողկոյզները դուք առանց հրամանի փրցուցիք: Եթէ խնդրէիք, մենք ամբողջ այգին կը նուիրէինք ձեզի,— պատասխանեցին մրջինները:

Մեղուները շատ ամչցան իրենց ըրածէն: Վերադարձուցին իրենց ստացած նուէրներն ալ ու թռան գացին:



հիւր
հիւրասէր
հիւրասիրել

Չարցումներ եւ հրահանգներ

1. Մրջինները ինչպէ՞ս ընդունեցին մեղուները եւ ինչպէ՞ս ճամբու դրին զանոնք:
2. Մրջինները ինչո՞ւ բարկացան մեղուներուն վրայ:
3. Ինչ կը սորվեցնէ այս հեքիաթը:
4. Կը յիշէ՞ք դէպք մը որ առանց հրամանի բան մը ըրած ըլլաք. պատմեցէք:



Սորվինք **g**-ով գրուող բառերուն ուղղագրութիւնը.
ապաթարց, հարց, հարցում, հարցական, հարցարան, յանցանք, յանցաւոր, արցունք, քաղցր, ընթերցել, ընթերցարան, մրցում, մրցել, մրցանակ, մրցակալ, տրցակ, Արցախ...

ՊԱՏԺՈՒԵՑԱԻ ԲԱՄԲԱՍՈՂԸ¹

(Առակ).

Առիժ արքան հիանդ էր: Կողին ցաւն կը մեռնէր: Բոլոր գազանները եկան հիանդտեսի: Միայն աղուէսը չկար: Ծեր գայլը ըսաւ առիժին.

— Կը տեսնես, արքայ, աղուէսը չէ եկած. չի յարգեր քեզ:

Գացին գտան աղուէսը եւ բերին:

— Ո՞ր ես, անպիտան,— պռռաց առիժը:


— Արքայ, երբ լսեցի որ հիանդ ես, գլխուս կրակ թափեցին կարծես,— պատասխանեց աղուէսը:— Այս կողմ ինկայ, այն կողմ ինկայ, վերջապէս գտայ ցաւիդ դեղը. գայլին մորթը մուշտակ ըրէ եւ հագիր: Անոր միսը եփէ եւ մսաջուրը տաք-տաք խմէ: Երբ քրտնի կողդ, կ'անցնի դողդ:

Առիժը հրամայեց որ մորթեն գայլը:

Մորթեցին գայլը: Առիժը տաք-տաք հագաւ գայլին մորթը, մսաջուրն ալ խմեց նախաճաշին:

Քրտնեցաւ կողը, անցաւ դողը:

Պատժուեցաւ բամբասողը:



**բամբասել
բամբասկոտ**

Չարցումներ եւ հրահանգներ


1. Գայլը ինչո՞ւ բամբասեց աղուէսը:
2. Աղուէսը ինչպէ՞ս պատժեց բամբասողը:
3. Սիրեցի՞ք այս առակը. ինչո՞ւ:
4. Ի՞նչ դաս պէտք է առնէք այս առակէն:



Ընդօրինակեցէ՛ք հետեւեալ բառերը՝ կէտերուն տեղ դնելով ձ կամ ց գիրը.

ար.ակուրդ, փոր.անք, մր.անակ, ար.ունք, բար.ունք, բար., ընթեր.ել, տր.ակ, հար.ում, ապաթար., դեղ., օ.իք, ընդար.ակ, քաղ.ր, վար.ել, ար.ան, յան.անք, վար.ակալ, բար.ր, յան.աւոր, բար.րանալ, ընթեր.արան, դար.նել, վերադար., Համբար.ում, Ար.ախ:

¹ **բամբասող** — մեկու մը մասին գէշ բաներ ըսող, չարախօսող



ԿՏԱԿ¹ ԳԱՆՁԻ ՄԱՍԻՆ (Առակ)

Աղքատ եւ իմաստուն մարդ մը ունէր ծոյլ որդիներ: Մեռնելու ատեն կանչեց զանոնք եւ ըսաւ.

— Ո՛վ զաւակներս, իմ նախնիներս շատ գանձ թաղած են մեր այգիին մէջ, բայց ես ձեզի պիտի չըսեմ անոր տեղը: Այդ գանձը կը գտնէ ան, ով շատ աշխատի եւ խոր փորէ հողը:

Հօրը մահէն ետք որդիները սկսան աշխատիլ մեծ եռանդով եւ շատ խոր կը փորէին հողը. իւրաքանչիւրը կ'աշխատէր, որ ինք գտնէր գանձը:

Այգին սկսաւ աճիլ, զօրանալ, առատ բերք տուաւ եւ հարստացուց որդիները զանձերով:

Հարցումներ եւ հրահանգներ

1. Պատմեցէք այս առակը:
2. Բացատրեցէք աղքատ մարդուն վարմունքը:
3. Որդիները ինչ դաս առին իրենց հօրը կտակէն. հրն է իսկական գանձը. գուշակեցէք եւ պատմեցէք:

Կտակ կտակել

¹ **Կտակ** — նուիրական ցանկութիւն, զոր մեռնողը իբրեւ պարտականութիւն կը դնէ ողջ մնացողներուն վրայ



ՈՍԿԻ ԿԱՐԱՍԸ¹

(Հեքիաթ)

Ա

Ժամանակին աղքատ հողագործ մը կար: Կտոր մը հող ու զոյգ մը եզ ունէր: Ձմեռը այս աղքատ հողագործին եզները կը սատկին: Գարունը ան հողը վարձու կու տայ դրացիին:


Փորելու ատեն դրացին հողին մէջէն կարաս մը ոսկի կը գտնէ: Կը վազէ հողատիրոջ քով ու կ'ըսէ.

— Հէյ, աչքդ լինս, դրացի՛, հողիդ մէջէն կարաս մը ոսկի գտայ, եկուր տար:

— Չէ, եղբայր, ատիկա իմն չէ,— կը պատասխանէ հողատէրը:— Հողին վարձը դոն տուած ես, դոն կը հերկես: Ուրեմն՝ այդ հողէն ինչ ալ ելլէ, քուկդ է: Ոսկի ելած է, թող ոսկի ըլլայ, ան ալ քուկդ է:

Ասոնք կը վիճաբանին: Մէկը կ'ըսէ՝ քուկդ է, միւսը կ'ըսէ՝ քուկդ է: Վէճը կը տաքնայ: Կ'երթան թագաւորին քով՝ գանգատելու: Թագաւորը կարաս մը ոսկիին անունը լսելուն պէս աչքերը լայն կը բանայ ու կ'ըսէ.

— Ո՛չ քուկդ է, ո՛չ ալ անորը: Կարասով ոսկին իմ հողիս մէջէն ելած է, ուրեմն՝ իմն է:



Բ

Թագաւորը իր մարդերով կ'երթայ, որ ոսկին բերէ: Կարասին բերանը կը բանայ, բայց ինչ կը տեսնէ. կարասը լեցուն օձ: Կատղած ետ կու գայ: Կը հրամայէ որ պատժեն ստախօս գի-

դուռ
դրացի

¹ Կարաս — կաւէ խոշոր աման (գինիի, ջուրի)

ղացիները:

— Չէ, թագաւորը ապրած մնայ,— կ'ըսեն խեղճերը,— մեզ ինչո՞ւ կը պատժես: Լաւ չես տեսած: Օձ չկայ կարասին մէջ. ոսկի է, ոսկի:

Թագաւորը ուրիշ մարդեր կը դրկէ: Անոնք ալ կը հաստատեն որ ոսկի է:

Թագաւորը նորէն կ'երթայ, կարասը կը բանայ. նորէն մէջը լեցուն օձ: Շատ կը զարմանայ եւ կը սկսի մտածել: Կը կանչէ իր երկրին իմաստունները, որ բացատրեն այս հրաշքը:

— Չբարկանա՛ս, թագաւոր, ատոր բացատրութիւնը աս է. կարասով ոսկին նուէր դրկուած է աղքատ գիւղացիներուն՝ իրենց արդար եւ ազնիւ աշխատանքին համար: Երբ դուն կ'երթաս, ուրիշին բախտը խլելու կ'երթաս: Ատոր համար ալ օձ կը գտնես ոսկիին տեղ:

Թագաւորը խօսք չի գտներ պատասխանելու: Կարասով ոսկին կու տայ գիւղացիներուն եւ կը հեռանայ:

Դրացիները նորէն կը սկսին վիճել: Այն ատեն իմաստունները խորհուրդ կու տան, որ մէկուն աղջիկը ամուսնացնեն միւսին տղուն հետ: Եօթը օր եօթը գիշեր հարսնիք կ'ընեն: Կարասով լեցուն ոսկին ալ կու տան իրենց զաւակներուն:

Հարցումներ եւ հրահանգներ

1. Ինչպիսի՞ մարդիկ էին երկու դրացիները. ինչէ՞ն հասկցաք:
2. Թագաւորը ինչո՞ւ կարասին մէջ օձ կը գտնէր. իմաստունները ինչպէ՞ս բացատրեցին այդ հրաշքը:
3. Սիրեցի՞ք այս հեքիաթը. ինչո՞ւ:
4. Դերերով ներկայացուցէ՞ք այս հեքիաթը:



Սորվինք **ջ**-ով գրուող բառերուն ուղղագրութիւնը.

աջ, էջ, արջ, որջ, ողջ, մէջ, մրջիւն, ամբողջ, չղջիկ, իջնել, վայրէջք, քերմ, աղջիկ, բողբոջ, գղջալ, վերջ, ջարդ, իջնել, միջակ, միջատ, միջնեկ, լուրջ, շուրջ, առողջ, յաջորդ...



ԻՄԱՍՏՈՒՆԸ

(Հեքիաթ)

Ժամանակին հարուստ մարդ մը կար: Կ'ըսէին թէ ան շատ հիրասէր էր: Իմաստուն մարդ մը լսած էր ատիկա:

Օր մը այս իմաստուն մարդը աղքատի հագուստներ հագաւ եւ հիր գնաց հարուստին տունը: Տանտէրը դժգոհութեամբ ընդունեց աղքատ հիրը: Ուտելու բան ալ չտուաւ: Իմաստունը տխուր հեռացաւ:

Յաջորդ օրը ան գեղեցիկ հագուստներ հագաւ ու նորէն հիր գնաց հարուստին տունը: Այս անգամ հարուստը յարգանքով ընդունեց զինք, համով կերակուրներով հիրասիրեց: Իմաստունը խնդաց քիթին տակ եւ դրամ տուաւ անոր: Հարուստը զարմացած հարցուց.

— Ինչո՞ւ դրամ կու տաս ինձի: Ես քեզի դրամի համար չհիրասիրեցի:

— Երէկ ես քու տունդ եկայ հին հագուստներով: Դուն սիրով չընդունեցիր զիս եւ չհիրասիրեցիր: Այսօր եկայ շքեղ հագուստներով: Մեծ պատիւներով ընդունեցիր զիս: Ուրեմն՝ դուն մարդը չես յարգեր: Քեզի համար կարելորդ մարդուն հարստութիւնն է,— ըսաւ իմաստունը եւ առանց բան մը ուտելու՝ ոտքի ելաւ ու գնաց:

Չարցումներ եւ հրահանգներ

1. Ինչպիսի՞ մարդ մըն էր հարուստը:
2. Իմաստուն մարդը ի՞նչ դաս տուաւ անոր եւ ինչպէ՞ս:



Սորվինք **չ**-ով գրուող բառերուն ուղղագրութիւնը.

խաչ, չամիչ, կարկաչել, բառաչել, շառաչել, ոչինչ, կանչել, չնչին, կոնչալ, պոռչտութ, զեղչել, ոչխար, աչք, մոնչալ, ամչնալ, մինչել, չափել, չակերտ, չղջիկ, չքաւոր, չտես, չքնաղ, չորքոտանի...

**ընդունիլ
ընդօրինակել
ընդօժել**

ԱՐԱԳԻԼՆ ՈՒ ԳՈՐՏԸ

(Առակ)



պարծենալ
պարծենկոտ

— Ես չորս ոտք ունիմ,
 Իսկ դուն՝ երկուքը,
 Իմս են լիճերը,
 Ցամաքը, ջուրը,—
 Պարծեցաւ գորտը
 Արագիլին քով:
 — Ճիշդ է, կը քալեմ
 Ես երկու ոտքով,
 Բայց շատ երկար են
 Անոնք, պարծենկոտ:
 Յետոյ՝ ես ունիմ
 Թեւիկներ երկու,
 Կը թռչիմ ազատ
 Վերեւն ամպերու:
 — Ես ունիմ նաեւ
 Սիրունիկ բերան.
 Երբ բանամ, կարծես
 Ըլլայ երգարան:
 — Իսկ իմ կտուցս
 Չեն տեսներ դուն, գորտ:
 — Ինչի՞ն պէտք է քու
 Կտուցդ անլորդ:
 Արագիլն այստեղ
 Ա՛լ չհամբերեց.
 Կլլեց մեր գորտը,
 Վէճը ամարտեց...

Հարցումներ եւ հրահանգներ

¹ փուլ — փորած, պարապ

1. Ինչի՞ մասին է այս առակը. այդ մասին ուրիշ ի՞նչ դասեր սորված էք կամ գիտէք:
2. Պարծենկոտ ըլլալը լա՞ւ բան է. ինչո՞ւ:
3. Դերերով ներկայացուցէք այս առակը:

Ընդօրինակեցէք հետեւեալ բառերը՝ կէտերուն տեղ գրելով **չ** կամ **ջ** գիրը.

ա.ք, մէ.ք, Խա.իկ, մի.ատ, յառա.աղէմ, կարկա.ել, յառա.ա-
նալ, կամուր., ուսուցի., ի.նել, բառա.ել, վայրէ.ք, որ., մի.ակէտ,
Մկրտի., թր.ել, բացագան.ել, ական., ման., նարին., ար., ո.խար,
ող., ող.ոյն, մր.իւն, առող., գեղ.ել, գղ.ալ, թռ.իլ:

ԱՍՍՅՈՒԱԾՔ

Պարծենկոտին մէջը փուլ¹ է,
 Ինչ որ ըսէ, կեսը սուլ է:

ԵՕԹԸ ԱՍՏՂԵՐ

(Հնդկական հեքիաթ)

Ժամանակին երկրի մը մէջ չորութիւն եղաւ: Գետերը ցամքեցան: Ջրհորներուն մէջ ջուր չմնաց: Ծառերը եւ բոյսերը չորացան: Հարիւրաւոր կենդանիներ ծարաւէն սատկեցան:

Այդ երկրին մէջ մայր ու աղջիկ կ'ապրէին: Մայրը հիւանդացաւ: Ջուր կ'ուզէր. ջուր չկար: Աղջիկը գնաց ջուր բերելու, բայց կաթիլ մը ջուր անգամ չգտաւ: Տխուր-տրտում տուն կը վերադառնար: Ճամբան նստաւ քարի մը վրայ՝ հանգչելու:

Քունը եկաւ: Երբ արթնցաւ, քովը կաւէ ամանով լեցուն ջուր տեսաւ: Ուրախութենէն սկսաւ պարել: Աղջիկը շատ ծարաւ էր. ուզեց կաթիլ մը խմել: Բայց յիշեց որ մայրիկը ծարաւ իրեն կը սպասէր: Տուն վազեց:

Ճամբան շունի մը հանդիպեցաւ: Շունը շատ ծարաւ էր եւ ջուր խնդրեց աղջիկէն: Աղջիկը քիչ մը ջուր տուաւ շունին: Կաւէ ջրամանը անմիջապէս արծաթ դարձաւ: Աղջիկը շատ ուրախացաւ: Գրկեց արծաթ ջրամանը եւ արագ տուն գնաց: Մօտեցաւ մայրիկին մահճակալին եւ անոր տուաւ ջուրով լեցուն ջրամանը: Բայց մայրիկը ըսաւ.

— Աղջիկս, առաջ դուն խմէ: Գիտեմ որ դուն շատ ծարաւ ես:

Եւ արծաթ ջրամանը ոսկի դարձաւ:

Երբ աղջիկը ջրամանը առաւ, որ խմէ, դուռը զարկին. ծարաւ մարդ մը ջուր կը խնդրէր: Աղջիկը ջրամանը տուաւ անոր: Մարդը խմեց, խմեց եւ օրհնեց աղջիկն ու մայրը:

Մայրիկը անմիջապէս առողջացաւ: Ջրամանը նորէն լեցուեցաւ: Անոր մէջ եօթը ադամանդներ երեւցան: Այդ եօթը ադամանդները երկինք բարձրացան ու եօթը աստղեր դարձան:



օրհնել
օրհնութիւն
օրհնանք

Չարցումներ եւ հրահանգներ

1. Աղջիկը ինչ բարի գործեր կատարեց:
2. Ինչ կը պատահէր ամէն անգամ, երբ ան բարի գործ մը կը կատարէր:
3. Ինչ կը սորվեցնէ այս հեքիաթը:




1. Ըսէք թէ ինչ կը նշանակեն հետեւեալ բարդ եւ ածանցաւոր բառերը.

ջրհոր, ջրաման, անծանօթ, անհամբեր, անտառապահ, գաղտնապահ, գունաւոր, թունաւոր, ժամացոյց, կողմնացոյց:

2. Դասին մէջէն գտէք եւ ընդօրինակեցէք ուղղագրական արժէք ունեցող 10 բառ եւ անոնցմէ հինգով բառակապակցութիւններ կազմեցէք:

ԱԳԱՀ¹ ՄԱՐԴՈՒՆ ՎԵՐՋԸ



ազահ ազահութին

¹ ազահ — չկշտացող, ծակաչք

² չես գղջար — բան մը ըրած ըլլալու համար գէշ չես զգար

Ա

Ժամանակին մարդ մը կար: Ընտանիքը շատ աղքատ էր: Ունեցած-չունեցածնին կով մըն էր: Ամէն առտու մարդը այդ կովին կաթը քաղաք կը տանէր, կը ծախէր եւ անոր դրամով կը հոգար ընտանիքին ապրուստը:

Օր մը՝ կաթը քաղաք տանելու ատեն, օձ մը կ'ելլէ իր առջեւ: Այդ օձը մարդու լեզուով կը խօսի ու կ'ըսէ.

— Ո՛վ մարդ, քիչ մը կաթ տուր ինձի, խմեմ. չես գղջար²:

Մարդը կը զարմանայ ու կը վախնայ, երբ օձը մարդու պէս կը խօսի: Բայց կը տեսնէ որ օձը հանգիստ պահած է: Կը նայի շուրջը, աման մը կը գտնէ, կը մաքրէ զայն ու կաթը կը լեցնէ անոր մէջ: Օձը կը խմէ կաթը, գլուխը շարժելով կարծես թէ շնորհակալութիւն կը յայտնէ մարդուն եւ կը մտնէ մեծ քարի մը տակ:

Այս մարդը քաղաք կ'երթայ, կը ծախէ կաթը եւ կ'ետօրէն ետք նոյն ճամբայով տուն կը վերադառնայ: Երբ կը հասնի օձին հանդիպած տեղը, կը տեսնէ որ նոյն ամանին մէջ ոսկի մը կայ:

Աղքատ մարդը շատ կ'ուրախանայ, ոսկին կը դնէ գրպանը եւ գիւղ կ'երթայ:

Յաջորդ օրը մարդը նորէն կաթը քաղաք կը տանի: Օձը նորէն կ'ելլէ իր առջեւ: Այս անգամ մարդը աւելի շատ կաթ կը լեցնէ օձին ամանին մէջ: Վերադառնալու ատեն ան նորէն ոսկի մը կը գտնէ ամանին մէջ:

Այսպէս՝ ամէն օր նոյն բանը կը կրկնուի: Աղքատ մարդը կը հարստանայ, տուն կը շինէ, այգի կը տնկէ: Աղքատներուն ալ բաժին կը հանէ այդ դրամէն: Աղքատները կ'օրհնեն այս մարդը, իսկ հարուստները կը զարմանան թէ ան ինչպէս հարստացաւ:

Բ

Տարիներ կ'անցնին: Երախաները կը մեծան, ուսում կ'առնեն: Մարդը կը ծերանայ ու կը սկսի դժուար քալել: Այն ատեն կը կանչէ իր մեծ որդին ու կ'ըսէ անոր.

— Որդիս, ես ծերացած եմ արդէն: Ա՛լ չեմ կրնար կաթը քաղաք տանիլ: Ասկէ ետք դուն պիտի տանիս: Ատոր համար ալ կ'ուզեմ որ դուն գիտնաս իմ հարստանալու գաղտնիքը:

Եւ հայրը կը պատմէ որդիին թէ ինք ինչպէս հարստացաւ:

Յաջորդ առտու, երբ որդին դուրս կ'ելլէ տունէն՝ կաթը քաղաք տանելու համար, հայրը կը պատուիրէ անոր.

— Որդիս, չըլլայ որ վնաս տաս օձին:

Որդին կը խոստանայ վնաս չտալ օձին, բայց միտքին մէջ կ'որոշէ սպաննել օձը, որ մէկ անգամէն հարստանայ:

Տղան կ'երթայ կը հասնի նոյն տեղը: Օձը կ'ելլէ անոր առջեւ ու կաթ կը խնդրէ իրմէ: Բայց օձը դեռ չէր վերջացուցած խօսքը, տղան կը հանէ սուրը եւ կը յարձակի օձին վրայ: Սակայն օձը կը սողայ, եւ տղան կը յաջողի կտրել անոր պոչը միայն: Օձը առանց պոչի արագ կը նետուի տղային վրայ ու կը խայթէ զինք: Տղան անմիջապէս կը մեռնի:

Իրիկուն կ'ըլլայ, բայց տղան չէր վերադառնար: Վախ կ'իյնայ հօրը սիրտը: Տունէն դուրս կ'ելլէ ու հազիւ քալելով՝ կ'երթայ քաղաք: Հեռուէն կը տեսնէ տղուն դիակը: Ծերունին կը հասկնայ ամէն ինչ ու կը սկսի լալ: Այն ատեն օձը կը հանէ գլուխը իր բոյնէն ու կ'ըսէ ծերունիին.

— Ես մեղաւոր չեմ, ծերունի. քու տղադ իմ պոչս կտրեց, ես ալ խայթեցի զինք: Այդպէս է. երբ փոքրը չի լսեր մեծին խօսքերը, փորձանք կուզայ գլխուն:

Չարցումներ եւ հրահանգներ

1. Ծերունին ինչպէ՞ս վարձատրուեցաւ ըրած բարիքին համար:
2. Ծերունիին տղան ինչո՞ւ պատժուեցաւ. ինչպիսի՞ մէկն էր ան:
3. Կը յիշէ՞ք դէպք մը, որ անհնազանդութեան պատճառով փորձանք մը պատահած ըլլայ ձեզի: Պատմեցէ՛ք:



Դասին մէջէն գտէ՛ք **դ-թ-ի** եւ **ջ-չ-ի** ուղղագրութեան պատկանող բառերը եւ ընդօրինակեցէ՛ք սինակներու մէջ:

ԱՍԱՑՈՒԱԾՔ

* Ազահ մարդը կը պարժուի:

* Ազահութիւնը չարիք է:

Գ. Մակինց

ԲԱՐԻ ԳՈՐԾ

(Հեքիաթ)



պանդոկ պանդոկապետ

¹ պանդոկ — ճամբորդներու՝ գիշերը քնանալու տեղ

Ժամանակին աշխարհի չորս կողմերէն ճամբորդներ հանդիպեցան իրարու: Չորսը միասին պանդոկ¹ գացին եւ գիշերը մնալու տեղ խնդրեցին:

— Միայն մէկ ազատ տեղ ունիմ,— ըսաւ պանդոկապետը:— Չորսդ ալ կը յարգեմ եւ չեմ ուզեր մերժել: Որպէսզի ձեզմէ ոչ մէկը նեղանայ, պայման մը կ'առաջարկեմ: Ձեզմէ ամէն մէկը ինծի պիտի ըսէ թէ ինչ բարի գործ կրնայ ընել: Տեղը անոր կու տամ, որուն պատմածը ամէնէն լաւը ըլլայ:

Առաջին ճամբորդը ըսաւ.

— Եթէ անտառին մէջ առիւծ մը յարձակի մարդու մը վրայ, եւ կը կռուիմ առիւծին դէմ ու կը փրկեմ մարդը:

— Փոթորիկի ժամանակ եւ ծով կը նետուիմ ու կ'ազատեմ խեղդուող մարդը,— ըսաւ երկրորդ ճամբորդը:

— Անապատին մէջ վերջին կաթիլ քուրը կու տամ ծարաւէն մեռնող մարդուն, որ փրկեմ զինք,— ըսաւ երրորդ ճամբորդը:

Այդ պահուն ծերունի մը մօտեցաւ անոնց եւ տեղ խնդրեց պանդոկին տիրոջմէն:

— Թռռնիկս ծանր հիւանդ է,— ըսաւ ան,— դեղ կը տանիմ անոր: Եթէ այս գիշեր չհանգչիմ, վաղը չեմ կրնար շարունակել ճամբաս եւ չեմ կրնար դեղը հասցնել թռռնիկիս:

— Մենք կ'աճապարենք,— ըսին առաջին երեք ճամբորդները— ուրիշ տեղ գտիր:

— Աւելի լաւ է բարի գործ ընել, քան խօսիլ այդ մասին,— ըսաւ չորրորդ ճամբորդը:— Եթէ պանդոկին այդ մէկ հատիկ տեղը ինծի տայիք, եւ զայն այս մարդուն կու տայի:

Պանդոկին տէրը այդպէս ալ ըրաւ:

Չարցումներ եւ հրահանգներ

1. Ո՞ր ճամբորդին պատասխանը հաւնեցաք. ինչո՞ւ:
2. Դերերով կարդացէ՛ք այս հեքիաթը:
3. **Ամէնէն շատ ո՞ր հեքիաթը կամ առակը սիրեցիք. համառօտ գրեցէ՛ք անոր բովանդակութիւնը:**

ԱՍՍՅՈՒԱԾՔ

Թռռունը իր թելով կը թռչի, մարդը՝ իր ըրած բարի գործերով:

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՐԺԵՔ ՈՒՆԵՑՈՂ
ԲԱՌԱՓՈՒՆՋԵՐ

վարդ
մարդ
զարդ
կարդալ

թի
թիավար
թիավարել

երրորդ
չորրորդ

հեղեղ
ջրհեղեղ

հիմ
հիմնադրել

պատկերագիր
սեպագիր
ծեռագիր

աշխարհ
աշխարհագրություն

նկար
նկարիչ
նկարչություն

գիտուն
գիտնալ
գիտնական

ծայն
ծայնաւոր
բաղաձայն

գին
անգին

գառ
գառնուկ
գառնարած

ծնող
ծնողասէր
ծնողասիրություն

տարի
տարեկից

գանձ
գանձապահ
գանձանակ

խորհիլ
խորհուրդ

ծագ
ծագուկ

որսորդ
որսորդություն
որսորդական

բոյր
բուրել

ընտիր
ընտանիք

տխուր
տխրիլ
տխրություն

ընկեր
դասընկեր

արցունք
արցունքոտ

խաղ
խաղադաշտ
կիսախաղ

թռչուն
թռչիլ

ժողով
ժողվել

թանկ
թանկագին
թանկարժեք

հայր
հայրենի
հայրենիք
հայրական

արձան
արձանագործ
յուշարձան

կարկաչ
կարկաչել
կարկաչուն

սկիւռ
սօսափին
անկին

ծինակատար
ծինապատ
ծինափայլ
ծինամարդ
ծինագնդակ

յաւերժ
յաւերժական
յաւերժություն

տպել
տպարան
տպագիր
տպագրիչ

գիւտ
գիւտարար

հրաշք
հրաշալի
հրաշագործ

սպասել
անսպասելի
հռչակաւոր
աշխարհահռչակ

Սասուն
սասունցի

Նախիր
Նախրապան

Վարդան
Մամիկոնեան
Յովհաննէս
Բաղրամեան

հրաման
հրամանատար

այծեամ
Այծեմնիկ

հնար
հնարագէտ
հնարագիտութիւն

գովել
գովք
գովասանք

հիւթ
հիւթալի
հիւթեղ

կեռաս
կեռասենի
կեռասիկ

միրգ
մրգաստան

բուրդ
բուրդէ
բրդոտ
բրդեղէն

կենդանի
կենդանաբանական

ազատ
ազատիլ
ազատարար

պահուրտիլ
պահուրտութ

երէ
պարկերէ

յիշել
յիշողութիւն
յիշատակ

միանալ
միասին

կռունկ
կրունկ

հիւր
հիւրասէր
հիւրասիրել

բամբասել
բամբասկոտ

կտակ
կտակել

դուռ
դրացի

ընդունիլ
ընդօրինակել
ընդգծել

պարծենալ
պարծենկոտ

օրհնել
օրհնութիւն
օրհնանք

ագահ
ագահութիւն

պանդոկ
պանդոկապետ

I. ԴՊՐՈՑ, ՈՒՍՈՒՄ, ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՅՔ, ԲԵՆ, ԳԻՍ. Ա. Տատրեան.....	4
ԱՅՔ, ԲԵՆ, ԳԻՍ. <i>խօսք եւ երաժշտութիւն Մարթէն Եօրկանցի</i>	5
ԵՐԿՈՒ ԹԻԵՐ. «Գանձարան» դասագիրք.....	6
ՆԱՅԱԾ Է, ԲԱՅՑ ՉԷ ՏԵՍԱԾ. «Կենդանի Դասագիրք».....	8
ՅԵՂԵՂ. Փոխադրութիւն.....	9
ԻՆՉԷ՞Ն Է ԱՐԴԵՕՔ. Ա. Աբրահամեան.....	10
ԻՆՉԵՐՈ՞Ւ ՎՐԱՅ ԳՐԱԾ ԵՆ ՄԱՐԴԻԿ. Կ. Գէորգեան.....	11
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԸ. Ա. Շիրոյեան.....	12
ՆԿԱՐԸ. Ա. Վարդանեան.....	13
ՄԵՐ ԳԻՏՈՒՆԸ. Ա. Կապուտիկեան.....	14
ՁԱՅՆԱԻՈՐ ԵՒ ԲԱՂԱՁԱՅՆ ՅՆՉԻՒՆՆԵՐՈՒՆ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ. Լ. Պօղոսեան.....	16

II. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔ..... 17

ՄՕՐՍ ՄԻՐՏԸ. Ըստ Յովի. Շիրազի.....	18
ՀԱՅՐՍ. Ըստ Յովի. Շիրազի.....	19
ԾՆՈՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ. Ա. Մամուրեան.....	20
ՄԵԾ ՄԱՅՐԻԿԻՆ ՆԱՄԱԿԸ. Ձ. Գալէնքեարեան.....	21
ԳԱՆՁ ՄԸ ՈՒՆԻՆՔ. Ա. Կապուտիկեան.....	22
ԲԺԻՇԿԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ. Ձ. Տօլապճեան.....	23
ԱՐԱԳԻԼՆԵՐՈՒՆ ԸՆՏԱՆԻՔԸ. «Մայրենի Լեզու» դասագիրք.....	24
ՄԱՅՐ ԵՂՆԻԿԸ. Ըստ Յովի. Թումանեանի.....	25

III. ԻՆՉԸ ԼԱՒ Է, ԻՆՉԸ ԳԷՇ Է..... 27

ԼԱՒ ՆՊԱՏԱԿ. Յ. Կարծիկեան.....	28
ԴԵՂՁԵՐԸ. Կ. Ուշինսկի.....	29
ԻՆՉՈ՞Ւ ՏԽՐԵՑԱՅ. Լ. Պօղոսեան.....	30
ՈՎ ԻՆՉՊԷՍ ՎԱՐՈՒԵՑԱԲ. Շ. Թաթիկեան.....	31
ԲԱՐԻ ՄԱՐԴԸ. Յ. Վարդանեան.....	33
ԻՆՉԻ՞ ՇՆՈՐՀԻ ԶԱՂԹԵՑԻՆ. «Աղբիւր» ամսաթերթ.....	34
ԹՈՉՈՒՆՆԵՐՈՒՆ ԲԱՐԵԿԱՄԸ. Վրժ. Նալպանտեան.....	36
ՔԱՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻ՞Ն. Ժ. Ե. Քասունի.....	37

IV. ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ..... 39

ԵՐԳ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՍԻՆ. Ա. Կապուտիկեան.....	40
ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ. Բ. Ճանեան.....	41
ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ. Վրժ. Նալպանտեան.....	42
ՀԱՅՐԵՆԻՔԻՍ. Բ. Կարապետեան.....	44
Ի՞ՆՉ ԿԸ ՊԱԿՄԵՐ ՍԿԻՒՌԻԿԻՆ. Փոխադրութիւն.....	45
ՊԱՆԴՈՒԽՏ ՄԱՆՈՒԿԸ ԵՒ ԱՐԱԳԻԼԸ. Ա. Դարբնի.....	46

V. ՆՇԱՆԱԻՈՐ ՄԱՐԴԻԿ ԵՒ ԼԱՒ ԳՈՐԾԵՐ..... 47

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻՆ. Խ. Դաշտենց.....	48
ՀԱՅ ԱՈՒԱՋԻՆ ՏՊԱԳՐԻՉԸ. Գ. Տերիկեան.....	49
Ո՞Վ ՀՆԱՐԱԾ Է ԳՈՒՆԱԻՈՐ ՀԵՌԱՏԵՍԻԼԸ Ա. Տէր-Գրիգորեան.....	50
ԾԵՐՈՒՆԻ ՆԿԱՐԻՉԸ. Ծ. Շաղամեան.....	51
ԴԷՊՔ ՄԸ ՀԱՆՍ ՔՐԻՍԹԻԱՆ ԱՆՏԵՐՍԵՆԻ ԿԵԱՆՔԷՆ. Կ. Գէորգեան.....	54
ՈՒՈԼԹ ՏԻՉՆԻ. Ա. Գալստեան.....	55

VI. ՀԱՅՐԵՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ	57
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹԸ ԳԱՌՆԱՐԱԾ. <i>Ըստ Յովհ. Թումանյանի</i>	58
ՓՈՔՐ ՄՅԵՐԻ ԺԱՅՈՒԸ. <i>Ըստ Մ. Խերանյանի</i>	59
ՎԱՐԴԱՆ ԶՕՐԱՎԱՐԻ ԿԱՂՆԻՆ. <i>Ա. Նազիմյան</i>	60
ԽՈՅ ՅԱԿՈՐԸ. <i>Ս. Բիրատ</i>	61
ԱՅԾԵՄՆԻԿ. <i>Ա. Ղանալանյան</i>	62
ՀՆԱՐԱԳԷՏ ՏՂԱՆ. <i>Ս. Մկրտիչյան</i>	63
VII. ԲՈՒՄԱԿԱՆ ԵՒ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ	65
ԳՈՎՔ ԿԱՆԱԶԻՆ. <i>Խ. Դաշտենց</i>	66
ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ ԵՆ ԾԱՂԻԿՆԵՐՈՒՄ ԳՈՅՆԵՐԸ. « <i>Կենդանի Դասագիրք</i> » ..	67
ԿԵՌԱՍԻԿԸ. <i>Մ. Թանգարանյան</i>	68
ԿԱՅԾՈՒԿ (Հեքիաթ). <i>Վ. Գրիգորյան</i>	69
ՏԱՆՁԵՆԻԻՆ ՎՐԱՅ. <i>Գ. Արեւեան</i>	71
ԳԱՌՆՈՒԿՍ. « <i>Արարատ</i> » դասագիրք	71
ԱՌԻԹՆ ՈՒ ՇՆԻԿԸ. <i>Լ. Թօլսթոյ</i>	72
ՃԱՅԵՐԸ. « <i>Մայրենի լեզու</i> » դասագիրք	73
ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ՀՐԴԵՐԵՆ ԱԶԱՏՈՂ ՇՈՒՆԸ. <i>Լ. Թօլսթոյ</i>	75
ՊԱՐԿԵՐԷ. <i>Ըստ Մ. Թարեանի</i>	76
ՓԻՂԵՐԸ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՆ. <i>Կ. Իմաստունյան</i>	77
ԲՈԼՈՐՍ ՄԻԱՍԻՆ. <i>Ռ. Ղարիպյան</i>	78
ՀՐԱԺԵՇՏ. <i>Ն. Միքայելյան</i>	80
VIII. ՀԵՔԻԱԹՆԵՐ, ԱՌԱԿՆԵՐ	81
ԱՌԱՆՑ ՀՐԱՄԱՆԻ (Հեքիաթ). <i>Փոխադրուքիւն</i>	82
ՊԱՏԺՈՒԵՑԱՒ ԲԱՄԲԱՍՈՂԸ (Առակ). <i>Խնկո-Ապեր</i>	83
ԿՏԱԿ ԳԱՆՁԻ ՄԱՍԻՆ (Առակ). <i>Վ. Այգեկցի</i>	84
ՈՍԿԻԻ ԿԱՐԱՍԸ (Հեքիաթ). <i>Ըստ Յովհ. Թումանյանի</i>	85
ԻՄԱՍՏՈՒՆԸ (Հեքիաթ)	87
ԱՐԱԳԻԼՆ ՈՒ ԳՈՐՏԸ (Առակ). <i>Ս. Մուրատյան</i>	88
ԵՕԹԸ ԱՍՏՂԵՐ (Հնդկական հեքիաթ)	89
ԱԳԱՀ ՄԱՐԴՈՒՆ ՎԵՐՋԸ (Հեքիաթ). <i>Մ. Յակոբյան</i>	90
ԲԱՐԻ ԳՈՐԾ (Հեքիաթ). <i>Գ. Մակինց</i>	92

Ասացուածքները, հանելուկները, շուտասելուկները՝ Մ. Կորիւնէն, Ս. Մուրատյանէն, Վ. Վարդուհիէն, Ն. Միքայելյանէն, «**Ծիծեռնակ**», «**Պիոներ**» ամսագիրներէն